№ 2 (113) XI ՏԱՐԻ ԱՊՐԻԼ 1901

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ԿՈՒՌՈՂ ՀԱՅՐԵՐԻ ԴԻՊԼՕՄԱՏ ՈՐԴԻՔԸ

Հրաւէրներ ենք կարդում Թիւրքին, քիւրդին, դրուզին, արաբին, մակեդօնացուն, ասորիին. հրաւէր՝ զինակցութեան, հրաւէր՝ համերաշխ ազատագրութեան, հրաւէր՝ դէպի կռիւ...

Կարո՞ղ ենք մենք մոռանալ յոյներին, որոնք թէև լուռ, անշարժ, թէև երբեմն նոյնիսկ թշնամական հոսվերով տարուած, բայց մնում են ժառանգներ հոյակապ հայրերի, հայրեր, որոնք իրենց չքնաղ երկիրը՝ ազատութեան հնոց դարձրին, և արեան գնով ու հանճարի ուժով այդ ազատութիւնը տարան՝ աշխարհ տարածեցին...

Անարժան, ստրուկ որդի՛ք...

Մոռացա՞ք դուք արեան այն գետերը, որոնք հեղեղեցին Յունական եգեմային կղզիները, կամ անլուր անպատուութեան այն սոսկալի հարուածները, որ բռնաւոր թշնամին թափեց յոյն սերունդների գլխին դարեր շարունակ, անընդհատ, անդադրում։ Մի՞թէ այնքան թուլացաւ ձեր յիշողութիւնը, որ մոռացաք արդէն Միսսոլօնգի, Սուլի, Ակարնանի, Քիոս. կամ արտասուքի այն գետերը, որ արեան գետերի հետ միասին թափեցին ձեր չքնաղ հերոսները՝ Կացանտօնիս, Կանարիս, Յաւելաս, Բօցարիս, թողնելով ապագայ հելլենութեան մի կտակ միայն, կտակ ազատութեան, կտակ անդադրում կռուի ընդդէմ թիւրքական բռնութեան, ընդդէմ քաղաքակրթութեան երկարադար թշնամու...

Դուք մոռացաք, այո՛։ Մոռացաք և ա՛յն ժամանակ, երբ—մի քանի տարի միայն առաջ—ձեր եղբայրները գութ շարժող ջանքեր էին թափում Թեսալիայի ձորերում՝ թումբ կանգնեցնելու սուլթանական զօրքերի դիմաց, առանց, աւա՜ղ, ունենալու կլասիք Յունաստանի կլասիք քաջերին. և ա՛յն ժամանակ, երբ Բալկանի լեռների լանջերում բուլգարը և սերբը ձեր նախահայրերին յիշեցնող հերոսութիւններ էին գործում՝ Ստամբուլի բռնութիւնը փշրելու նպատակով. և ա՛յն ժամանակ, երբ ամբողջ Հայաստան արեան ծով էր դարձել՝ յանուն այն ազատութեան և կռուի, որ մենք ձեր հայրենիքից սովորեցինք, որ ձեր նախահայրերից փոխ առանք...

Ինչու՞։ Ինչ պատահեց։ Յոգնե՞ց արդեօք նորագոյն սերունդը տևողական կռիւներից, թէ մօնգոլական ցեղի քնացնող թմրեցուցիչ ձեռքը արմատից պոկեց այն սրբազան ծիլը, որ այնքա՜ն խնամքով և այնքա՜ն հպարտութեամբ տնկեց հելլենականութիւնը իր որդոց սրտում։ Կամ գուցէ նեղ շահասիրութիւնը, անվրդով՝ թէև ստրուկ կեանքը շատ քաղցր է թւում միլիօնաւոր յոյներին, որոնք դեռ շարունակում են ապրել հին Բիւզանդիօնի տիրապետողի ամօթալի հովանուտակ՝ Կ. Պօլսում և Միջերկրականի ափերի վրայ, Զմիւռնիայից մինչև Տրապիզօն, Հալէպից մինչև Մակեդօնիա...

Ցնորակա՜ն հանգստութիւն։

Կամ գուցէ երազում են մեր հելլեն հարևանները, որ հայկական շարժումը Փոքր-Ասիայում, և մակեդօնական ապստամբութիւնը Բալկանի կողմերում վնասակար է ապագայ Մեծ-Յունաստանին, վտանգաւոր յունական շահերին և արգելառիթ այն երազներին, որ յաճախ տեսնում են Աթէնքի „քաղաքագէտների" միամիտ հաւատացողները, երբ տարուած քաղաքական հեռանկարներով, պատկերացնում են ապագայ Հելլենական կայսրութիւնը, կենտրօնում՝ Բիւզանդիօն, խաչափայլ սուրբ-Սօֆիայով, ու ծայրերում՝ Մակեդօնիա, Փոքր-Ասիա, Կրէտէ, Պալեստին, բոլորն էլ միաձոյլ գլխակոր յունական դրօշի առաջ...

Թող լինի այդպէս։

Սակայն լայն ցնորքները՝ լայն սիրտ և լայն ջանքեր են պահանջում։ Սխալւում են կիսալուսնի իշխանութեան տակ հեծող յոյները, կարծելով, որ ցանկալի հանգստութեան աղբիւրը լռութեան, անշարժութեան մէջն է, և կամ ապագայ քաղաքական մեծութեան ճանապարհը՝ այն անտարբերութեան մէջ, որ թոյլ է տալիս հանգիստ աչքով, չարագործին վայել անտարբերութեամբ նայել այն դժոխային կոտորածներին, որոնց ենթակայ է հայը Հայաստանում, մակեդօնացին Մակեդօնիայում։ Հայի թուլանալը՝ սուլթանի ուժեղանալն է. Մակեդօնիայի ստրկութիւնը՝ թրքական բռնապետութեան մի նոր յաղթանակը և ուրեմն մի նոր հարուած յունական տենչին, ահա թէ ինչ պիտի հասկանան մեր յոյն եղբայրները—բացառութիւնները մեզ չեն կարող մխիթարել—յաճախ այնքան նեղսիրտ, այնքա՜ն անհեռատես...

Եւ այդ նրանք չհասկացան։ 95-ին, հայկական կոտորածների սոսկալի օրերին, երբ Տրապիզօնում, օրինակ թիւրք վինուորների դաշոյնից հալածական հայը մի բաց դուռ էր աղերսում՝ իր կեանքը փրկելու համար, յոյն

հարևանները փակում էին դռները թողնելով նահատակ ժողովուրդը անգթութեան ճանկերում։ Եւ դա ոչ միայն Տրապիզոնում, այլև ուրիշ շատ տեղեր... Դէպքեր եղան, դէպքեր յաճախակի, որ յոյնը միացաւ Թիւրքին՝ հայի դէմ։ Իսկ Մակեդոնիայում, ո՜հ, ծանր է նոյնիսկ խոստովանելը։ „Աւելի լաւ է Մակեդոնիան Թիւրքիային պատկանի, եթէ մեզ չի պատկանելու“ — ասում են յոյն „քաղաքագէտները“։ Ահա դա է այն սրտաճմլիկ, յուսահատեցնող, Թիւրքաց ինտրիգներին նոր ոգի ու նոր ուժ տուող դէպքերի ու փոխադարձ թշնամութեան աղբիւրը, որոնք տարիներից իվեր տեղի են ունենում անկախութեան ձգտող փոքրիկ երկրի շուրջը, կասեցնելով նրա ազատագրութիւնը... Եւ այդ յանցաւոր նեղսրտութեան դիմաց, մենք, հալածական ազգերս մեզ խաբում ենք շինծու մի հ ա մ ե ր ա շ խ ո ւ թ ե ա մ բ, որի „ամենալուրջ“ արտայայտութիւնը այն քաղաքավարական այցելութիւնն է, որ տարին մի անգամ Կ. Պոլսի պատրիարքները անում են միմեանց, ճառախօսելով „քոյր եկեղեցիների“ փոխադարձ հաշտութեան և բարեկամութեան մասին։ Որպիսի՜ փոքրոգութիւն։ Որպիսի անմիտ ինքնախաբէութիւն...

Մեր յոյն հարևանները մեզ լաւ չեն ճանաչում։ Նախանձը մեր նշանաբանը չէ, և ոչ էլ նեղսրտութիւնը՝ մեր քաղաքական դաւանանքը։ Մենք ցանկացող ենք հելլենականութեան մեծութեան, իբրև մի նոր զօրավիգ քաղաքակրթութեան, իբրև մի նոր շինուածք՝ օսմանեան բռնապետութեան աւերակների վրայ։ Եւ եթէ մեզ կ՚ասեն, որ անկարելի, անիրագործելի, երազական է այն Մ ե ծ-դ ա շ ն ա կ ց ո ւ թ ի ւ ն ը, որը — Երիտասարդ-Հայաստանի տենչն է այդ — պիտի համախմբի իր մէջ Ստամբուլի ճանկերում հիւծող բոլոր փոքրիկ ազգերին, այն ժամանակ մենք առանց տատանման կը պատասխանենք. „Թող այդ գերիշխանութիւնը պատկանի հելլենականութեան, բայց ոչ սուլթաններին. բռնապետ սուլթանականութեան տեղ թող գլուխ բարձրացնի նորագոյն Բիւզանդիոնը, իբրև նորագոյն օրրան ժամանակակից քաղաքակրթութեան“։ — Աւելին։ Եթէ մի օր արիւնոտ կռիւ կը ծագի այդ գաղափարի իրագործման համար, հայկական սերունդների լաւագոյն մասերը, դուրս եկած վերացական համակրանքի շրջանակից, ձեր շարքերի մէջ կը նետուեն, ինչպէս այդ փորձեցին անել 5 տարի առաջ, երբ սուլթանի զօրքերը, կատաղած իրենց աջողութեամբ, Լարիսսայի վրայով դէպի Աթէնք էին վազում...

Հելլենականութեան թշնամին, յոյն հարևանը՝ հայը, սերբը, բուլգարը, մակեդոնացին չէ։ Ձեր թշնամին նոյնն է, որ իրագործեց հայկական կոտորածները, որ սպառնում է նոր կոտորածներ Մակեդոնիայում, նա, որ երբեմն ձեր գեղեցիկ հայրենիքը դարձրեց գերեզմանոց, ձեզ էլ ստրուկ։ Ջ՚օգնելով ձեզ ստրկացնողի թշնամիներին, դուք դաւաճանում էք ձեր անուն, ձեր պատմութեան, ձեր կուռող մեծանուն հայրերից ձեզ թողած սրբազան կտակին։

Դա դաւ է՝ ոչ միայն ձեր անցեալի այլև ձեր ապագայի դէմ։ Աններելի միամտութիւն է կարծել, որ սուլթանական սուրը կուռած է միայն հայերի դէմ։ Նա նոյն ուժով կը խողխողի այն բոլոր տարրերը, որոնք հանդիսանում են քաղաքակրթութեան կրողներ Թիւրքաց պետութեան սահմաններում, և որոնց մէջ յոյն տարրը կարևոր դիրք ունի։ Նա միայն յարմար բոպէին է սպասում։ Եւ եթէ այդ սոսկալի վիշապը օր առաջ չը ջախջախուի տանջուող ազգերի միացած, դաշնաւորուած ուժով, նա՝ Հայաստանում և Մակեդոնիայում իր հաշիւները տեսնելուց յետոյ՝ մի օր նոր Ուրֆա և նոր Այգեստան կը կազմակերպի այն „խաղաղ“ վայրերում, ուր յոյները, հարևաների դժբախտ օրերին, երազում էին իրենց շատ ապահով, շատ խաղաղ և շատ հեռատես...

Վտանգաւոր երազներ...

Միացէք կուռողներին, եթէ չէք կամենում պատժուել ձեր քնած, անտարբեր, յանցաւոր վերաբերմունքի համար։ Ձեռք տուէք նրանց, որոնք արիւն են թափում բռնապետութիւնը տապալելու համար։ Ունայն համակրութեան օրեր չեն ներկայ ճգնաժամի օրերը, այլ գործի, կռուի օրեր։ Միացած կռուի և ներդաշնակ բողոքի մէջ է ձեր պատիւը, ձեր ապագան, ձեր մեծութիւնը։

Սա միայն հայկական պրոպագանդ չէ։

Սա պիտի լինի և՛ յունական պրոպագանդ։

ԿՕՆԳՐԷՍ

Մեր Խմբագրութեան մէջ ստացուած են Թիւրք ազատամիտների կողմից հրատարակուած երկու բրոշիւր, որոնցից մինը խմբագրել են սուլթան Արդիւլ-Մէջիդի թոռները՝ Սեբահէդդին և Լուութֆուլլահ, միւսը՝ Հիլմի Թունալի, երիտասարդ Թիւրք։ Երկու բրոշիւրներն էլ միութեան կոչ են ուղղում Թիւրք կայսրութեան մէջ գտնուող բոլոր դիմադրական տարրերին՝ տաճիկներին, հայերին, մակեդոնացիներին, ալբաններին, քիւրդերին և ն և հրաւիրում են նրանց ը ն դ հ ա ն ո ւ ր կ օ ն գ ր է ս ի։ Կոչ անողները յոյս են տածում, որ այդ հ ա մ ա ժ ո ղ ո վ ը կը կարողանայ համաձայնութեան բերել և նոյնիսկ իմի ձուլել օսմանեան կայսրութեան բոլոր ա զ ա տ ա մ ի տ կուսակցութիւնները։

Որքան և բազմաթիւ ու բազմադիմի լինեն այդպիսի մէկ համագումարի հետ կապուած խոչընդոտները, այնուամենայնիւ մեզ թւում է, որ Թիւրք ազատամիտների յղացած գաղափարը ուտոպիա չէ, և միանգամայն ցանկալի է նրա շուտընդփոյթ իրագործումը, իբրև մի դ ր ա կ ա ն ք ա յ լ դէպի այն բաղձալի համերաշխութիւնը, որին ձգտում են տարիներից իվեր միևնոյն բռնակալութեան, միևնոյն դահճի զոհերը։

Շտապում ենք ծանուցանել, որ մեր պատասխանը դրական է և որ գումարելիք համաժողովին „Դրօշակ“-ը կուղարկէ իր ներկայացուցչին։

ՔԱՂՑԱԾ ԳԱՅԼԵՐ

(Ա. ԿԱՄՊԻՕՆ-ԻՑ)

—

Ժամկներում քաղցած գէլեր
Կը թափառեն ոռնալով,
Քաղցած գէլեր — քիւրդ ու թիւրքեր,
Զոհ կը փնտռեն ոռնալով։

Քաջ հովիւնե՛ր, զարթուն կեցէք,
Ձեր հօտերը կը ջնջեն.
Ձեր աչքը ձեր հօտին պահէք,
Քաջ հովիւնե՛ր, կտրիճնե՛ր։

Էս գաղաններն ո՞վ են սրանք
Մեզնէն եկեր ի՞նչ կուզեն.
Թուր ցոյց կուտան, սուր ցոյց կուտան,
Ու լըբաբար կ'խօսեն։

Մեր պատիւն ու ազատութիւն
Կուզեն խլել մեզանից.
Ահա լսէք ի՞նչ են հաջում
Լիրբ սուլթանի բերանից։

Մեր գեղեցիկ, քաջ տղէրքը,
Մեր նազելի, կոյս քոյրերն —
Լրբին ծառայ պիտի լենին,
Էն լիրբ շանը հարէմներ։

Բայց մեր հողի ազատութեան
Կաղնին չուզեց խոնարհուել.
Ու նրանք էլ կատղած եկան,
Կուզեն կաղնին խորտակել։

Դո՛ւրս այստեղից, դուրս թշնամի՛ք,
Էլ մենք ձեզնից ահ չունենք.
Մեռնելու չէ՞ մեր հայրենի՛ք,
Արուն թափել մենք գիտենք։

Դո՛ւք, լըբե՛ր դ, զինուած զէնքով,
Իսկ մեր ձեռքին գերանդին,
Բայց կ'ջարդենք մենք ամէնքիդ,
Ձէք դիմանայ մեր ուժին։

Ծէռ-ղեռ քարեր կը պատռտենք
Մեր անառիկ լեռներէն.
Ու ձեր գլխին մենք կ'թափենք,
Ձեզի մէկ-մէկ կը փշրենք։

Դո՛ւրս մեր երկրից, դո՛ւրս, լակոտնե՛ր,
Էլ մենք ձեզնից ահ չունենք,
Մեռնելու չէ՞ մեր հայրենի՛ք,
Արուն թափել մենք գիտենք...

Ազատ փոխադրութիւն **ՀԱՅՏ-ԳՈՒՍԱՆ-Ի**

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԸ ԵՒ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

(ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ)

—

Փետրվար 10

Լինելով մէկը այն երիտասարդներից, որոնք գիտակցութեան հասած հասակում դտան յեղափոխական գաղափարը հայերիս մէջ արդէն մարմնացած, խնդրում եմ „Դրօշակի“ խմբագրութեանը՝ թոյլ տալ ինձ, „Դաշնակցութեան“ տասնամեակի առիթով, մի քանի խօսք ուղղել այն սերնդին, որին պատկանում եմ ինքս։

Եթէ կծու կշտամբանքով եւ արհամարհանքով դիմեն մեզ, նոր սերնդին, ցոյց տալով, որ մենք անտարբեր ենք մնացել մինչեւ այժմ մեր ժողովրդի ցաւերի դիմաց, — իրաւամբ կ'անուէր այդ։

Ցիրաւի, մեր յեղափոխութիւնը ղեկավարողների թէ մեր հասարակ յեղափոխականների շարքում մենք մինչեւ այժմ դժբարութեամբ կը գտնենք մէկը, որ յեղափոխութեան այն շրջանին չպատկանէր, ուր առաջին անգամ զգացուեց եւ գիտակցուեց մեր ժողովուրդի տրտունջն ու պահանջները։ Մենք չէինք բոլորովին այն յեղափոխականներից, որ առաջին անգամ օդի մէջ ցրուած այդ բողոքները հաւաքեցին, ձեւակերպեցին եւ ջանացին գործնական ճանապարհներ գծել ու հարթել՝ հայ ժողովուրդը իր տագնապալի վիճակից հանելու համար։

Այժմ յեղափոխութիւնն ունի իր ռազմական պատմութիւնը, եւ ա՞յժմ է միթէ, որ դեռ եւս պիտի հրաւէր կարդացուի եւ բացատրուի իրերի վիճակը։ Բայց եւ այնպէս այժմ իսկ մենք տեսնում ենք բազմաթիւ անհիմն, անմիտ պահանջներ, դատողութիւնների եւ պատճառաբանութիւնների մի շարք, որ համոզել են տալիս՝ թէ այդ իսկ նոր սերնդի մէջ կայ դեռ եւս մի ահագին մեծամտանութիւն, որ չէ գիտակցել իրերի դրութիւնը։ Նա երբէք չի հրաժարուում իր ծրագիրն ունենալ, — իդէալական ծրագիր, որ միանգամայն լցուած է բարձր սիրով դէպի իր հասարակութիւնը,—բայց եւ միաժամանակ նա անտարբեր է դէպի իր ժողովուրդը, որը գերագոյն զոհեր է տալիս մարդկութիւնը ճնշող բռնակալութիւններից մէկը կործանելու համար։

Ի՞նչպէս համաձայնեցնել մարդասիրական այն գովելի ձգտումները, որ տեսնում ենք մեր երիտասարդութեան մէջ, եւ այն սառնասրտութիւնը, որ նա արտայայտում է հայ-մարդու ցաւերի դիմաց։ Եւ այն ժամանակ, երբ ամբողջ հայ ժողովուրդը կանգնած է մահուան ճանկերի մէջ, մեր երիտասարդութիւնը չէ՞, որ բարձրաձայն գոչում է՝ թէ ինքը դեռ սպասում է «ուսումնասիրած տեսնել տաճկահայ ժողովրդի վիճակը»։ թէ նա դեռ չգիտէ՝ «իրաւունք ունի արդեօ՞ք յեղափոխական շարժումը մեր հանգամանքը եւ գործակցութիւնը վայելելու»։

Նոյն այդ երիտասարդութիւնն է, որ միացած հասարակութեան այն մասի հետ, որը չի կարող մարսել ոեւէ յեղափոխութիւն, պնդում է՝ թէ պիտի իմանայ, արդեօք «ցանկանում է տաճկահայ ժողովուրդը շարունակել իր յեղափոխութիւնը, թէ՞ նա կուզենար տանել իր ստրկական կացութիւնը։ Կամ «դուցէ ներկայ պայմաններում մեր ժողովուրդը հացի միայն կարիք ունի. նրան պիտի չխռովել զէնքերով եւ կռի հրաւէրներով»։ Նա յաճախ դժգոհ է, որ ինքը չէ կարող խնամքով կօնտրոլի ենթարկել յեղափոխական դրամարկղի բիրանը։ Եւ վերջապէս նրա ծոցից չէ՞ն լսում արդեօք այս ձայները. «Իդէալիստներինը չէ այս աշխարհը, այլ նրանցը, որոնք անդուխ հաշուապահութեամբ խնամում են իրենց ամենաչնչին ուժերը, որոնք հաշուում, չափում են հազար անգամ՝ մի անգամ քայլելու կամ դուցէ նոյնիսկ անշարժ մնալու համար»։

Եւ այս բոլորն ասում է նա ամենայն սառնութեամբ, նոյնիսկ ինքնագոհութեամբ... Բայց միթէ՞ իրաւամբ մենք դեռ բաւական չկարդացինք մեր յեղափոխութեան պատճառների մասին. միթէ՞ չիմացանք, որ նա մի օրինաւոր զաւակ է, որ ծնել է մեր հասարակութեան հոգու մէջ ամբարուած բազմաթիւ պահանջների ու ձգտումների եւ ներկայ բարբարոս ու մարդախողխող ռէժիմի միատեղ եւ միաժամանակ գոյութիւնից։ Զըտեսա՞նք, որ մինչդեռ հայ ժողովուրդը Տաճկահայաստանում հսկայական ճիգեր էր անում դէպի քաղաքակրթութիւնը, տաճկական բռնապետը հարիւր հազարներով կոտորում է հայերին, լցնում է երկիրը բարբարոս ցեղերով, զինում է նրանց, բազմապատկում է հայ ժո-

ղովրդի հարկերը եւ անտարբեր է մնում դէպի ուեւէ բարեկաւում երկրի մէջ, եւայլն։

Մենք ուզում ենք ուսումնասիրել Հայաստանի եւ հայ ժողովրդի դրութիւնը, բայց եւ ոչ մէկը մեզանից այնքան համարձակութիւն չունի, որ համաձայնուի մտնել այդ տառապանքի երկիրը եւ ուսումնասիրել նրան։ Ինչո՞ւ. — որովհետեւ ոչ ոք չի ուզում իր մահը, ոչ ոք ցանկութիւն չունի իր գլուխը կորել տալ։ — Որպիսի՜ ծաղր. . . Մի երկիր, ուր մարդու գլուխ են կտրում միմիայն նրա համար, որ նա հայ է, կարո՞ղ է դեռ եւս մեզ համար («անյայտ»), («չուսումնասիրուած») համարուել իր բացասական կողմերով։

Մեր երկրում, հայի երկրում, այսօր միայն անիշխանութիւն, աւազակութիւն, մահ եւ սով կայ։ Եւ եթէ մենք իդէալներ ունենք, եթէ մենք սէր ունենք դէպի մարդկութիւնը, եթէ ուզեղ ունենք, որ մտածի մեր շահերի — անհատական եւ հասարակական շահերի—մասին, մենք ամենայն հեշտութեամբ պիտի տեսնենք, որ այսօրուայ Հայաստանում ապրող հայը անկարող է իր անհատական եւ հասարակական ուեւէ ձգտումին բաւարարութիւն տալ, որովհետեւ մինչդեռ այնտեղ տիրում է վայրագ, արիւնածարաւ բռնակալութիւնը, չէ կարող առաջանալ ուեւէ քաղաքակրթութիւն, մտաւորական բարեկեցութիւն եւլն։ Եւ եթէ մենք ուզում ենք մեր լայն ծրագրի մէջ արձանագրուած ուեւէ մի կէտը իրագործուած տեսնել, մենք պիտի տրամաբանօրէն յարենք յեղափոխութեան։ Յեղափոխութիւնն է միակ դրական արժէքը մեր այսօրուայ կեանքի մէջ եւ ամէն ինչ, որ հակայեղափոխական է ու անտարբեր դէպի յեղափոխութիւնը, բացասական մնծութիւն է — մի ուժ, որին վիճակուած է մեռնել։ Եւ ամօթով պիտի ծածկեն մեզ մարդիկ, եթէ կանգնած մի դրութեան դէմ, որ մասային զոհեր է տանում, որ աղքատութիւն եւ սով, մտաւոր անկում եւ բարոյական հրէշաւոր երեւոյթներ է առաջ բերում,— մեր սերունդը մնայ անտարբեր, իր յաւէրժ անիրագործելի ծրագիրներով։

Յեղափոխութեան կողմն են մեր մարդկային յատկութիւններն եւ մեր մարդկային գիտութիւնը։ Եւ ո՞վ կարող է պնդել՝ թէ կայ այս աշխարհում մի գիտութիւն, որ հակառակ լինի յեղափոխութեան կրած դէվիզին։ Այդ է պատճառը, որ իմաստակողների շարքերից աւելի շատ անտարբերութիւն է տեսնուում, քան այն խաւերում, ուր բնութեան երկաթեայ օրէնքը անդիտակցաբար կատարում է իր գործը. այնտեղ հասարակութեան գերագոյն շահը հրամայում է անհատին տալ իր շահերը եւ խոնարհեցնել իր շահերը հասարակական շահերի առաջ։ Այս է գիտութեան վերջին խօսքը եւ այս է կատարում անգրագէտ ժողովուրդը իր անգրագէտ զաւակների միջոցով։ Իսկ մենք, որ ճաշակում ենք գիտութիւնը, մենք նայում ենք ժողովուրդի ցաւերին եւ՝ տեսնելով մեր նանիր, բոպէական երջանկութիւնը, մոռանում ենք այն օրհասական դրութիւնը, որի մէջ գտնուում է ընդհանրութիւնը։

Վերջացնում եմ խօսքս մի առաջարկութեամբ, որը գուցէ տարօրինակ թւի ձեզ, բայց ես բերում եմ իբր իմ մտքերի ամփոփումն։ Մինչեւ այսօր «համիդիական» խօսքը գործ է ածւում իր որոշ նշանակութեամբ՝ ամէն անգամ իհարկէ բարձրացնելով մեր մէջ այն զայրոյթը, որին իսկապէս արժանի են արիւնահեղութեան եւ թալանի համար կազմակերպուած քրդական գնդերը։ Ես կուզենայի, որ այսուհետեւ ընդհանրացնէր այդ խօսքի գործածութիւնը եւ «համիդիականի» զզուելի անունը յատկացնէր այն բոլոր հայերին, որոնք իրենց անմիտ պատճառաբանութիւններով կամ դատապարտելի անտարբերութեամբ դժուարացնում են հայ յեղափոխական կուսի ընթացքը եւ դրանով անագին ծառայութիւն են մատուցանում հայակեր Համիդին։

ԵՒՐՕՊԱՑԻ ՀԱՑ ՈՒՍՄՆՈՂ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ

Պետերբուրգ, 7 փետրվար

Փակւած ու փակւող դպրոցների տեղ ի՞նչ տւեց կառավարութիւնը 10 միլիոն բնակիչ ունեցող ուսումնատածարաւ Կովկասին. — „Արեան տաճարներ", որ իշխան Դոնդուկով-Կորսակով մկրտեց „Փառքի տաճար" տիտղոսով, և որը տնկւած Թիֆլիսի գլխաւոր փողոցի վրայ, ընդ միշտ պիտի մնայ իբրև անջինջ յիշատակ գեղանի Կովկասի տխուր ստրկութեան, լեցւած արեան և կոտորածների „յաղթական" նկարներով, և կամ՝ „ուղղափառ" դաւանութեան շքեղ տաճարներ, կառուցւած անուղղափառ ժողովրդների դրամով այնպիսի անկիւններում, ուր դեռ ոաք չի դրել ուղղափառութեան հայրենիքից փախուստ տւող աղքատ, մուրացկան, հալածւած ռուս գիւղացին. . .

„Արեան և խունկի տաճարները", այո՛, բանում են նախանձելի արագութեամբ այն դժբախտ երկրում, ուր 30 տարի է առնւազն, որ աղերսում են հիմնել մի համալսարան, մի բազմաբեստեան բարձր դպրոց, մի լեռնային ճեմարան, վերջապէս գիւղատնտեսական մի բարձր հիմնարկութիւն, հանդիպելով այդ հոնուր աղերսանքի դիմաց միևնոյն դաժան, անսիրտ, անհոգի պատասխանին՝ „Անկարելի է"։

Եւ ինչո՞ւ է անկարելի։ Գուցէ այն պատճառով, որ բիւրոկրատիական անսանձ թալանին ենթակայ գանձարանը միջոց չունի. և կամ՝ յոյս չկայ որ տեղական ժողովուրդները՝ հայ, վրացի, թիւրք, բաւականաչափ ուսանողներ տան գիտութեան տաճարներին, այլ կը մնան անտարբեր դէպի բարձր կրթութիւնը։ Ոչ և ոչ։ Թէ կենտրոնական Թիֆլիզը, որ մի քանի անգամ խնդիրք է մատուցել Կովկասում համալսարան հիմնելու մասին. թէ դրամատատ Բաքուն, որ առիթը չէ փախցրել խընդրամատոյց լինելու մի պոլիտէխնիկումի համար, և թէ վերջապէս ուրիշ քաղաքներ, որոնք սրտատրոփ սպասում են մի այդպիսի հիմնարկութեան, շատ անգամ և շատ որոշ կերպով առաջարկել են կառավարութեան և՛ փող՝ ծախքերի համար, և՛ գետին՝ շինութեան համար, և միջոցներ՝ ապագայ ապահովութեան համար։ Սակայն ապարդիւն։ Փողի խնդիրը չէ, որ վճռական դեր է կատարում այս հարցում։ Եւ ոչ էլ ուսանողների թւի խնդիրը, որովհետև ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան ամենատգէտ պաշտօնեան անգամ գիտէ, որ ահագին Կովկասում, ուր գլխաւոր ազգերի մէջ գոնէ՝ լայն չափեր է ընդունել առհասարակ կրթութեան և մասնաւորապէս բարձր մասնագիտական կրթութեան տենչը, մի բարձրագոյն հիմնարկութիւն ոչ միայն պակասութիւն չի զգայ, այլ նոյնիսկ երևի տեղ չի ունենայ այն ահագին հոսանքի դիմաց, որ կրսկսի դէպի նա ոչ միայն երկրի զանազան ծայրերից, այլ և շատ հաւանօրէն հարևան Թիւրքիայից և Պարսկաստանից, ուր եթէ ոչ Թիւրքը կամ պարսիկը, գոնէ հայը երբէք անտարբեր չի մնայ և կը վազի դէպի մտքի և գիտութեան կենտրոնը. . .

Ո՛հ, ոչ. դրանք չեն արգելքները, այլ այն ապաբախտ

պ օ լ ի տ ի կ ա ն, որ հանդիսանում է իբր միակ ղեկավար ռուսական բոլոր գործերի, նոյնիսկ զուտ կրթական-գիտական գործերի մէջ, և որը սպառնում է գ ի տ ո ւ թ ի ւ ն ը և գ ի տ ո ւ թ ե ա ն տ ա ճ ա ր ն ե ր ն էլ դարձնել պ օ լ ի ց ի ա կ ա ն խնդիր, ենթակայ „գաղտնի խորհրդականների“ գաղտնի խորհուրդներին։

„Հիմնել Կովկասում մի բարձրագոյն դպրոց — ասում են այդ „գաղտնի խորհրդականները“ — կը նշանակէ աւելի նպաստել ծ ա յ ր ե ր ի սէպարատիստական հակումներին, և թուլացնել այն օղակը, որը պիտի կապի նրանց կենտրոնի հետ“։ Եւ այդ ճզմող, խեղդելու չափ սղմող ք ա ղ ա ք ա կ ա ն օ ղ ա կ ը ամրապնդելու համար է, որ ստիպում են հայ, վրացի, թիւրք երիտասարդներին միջնակարգ դպրոցները վերջացնելուց յետոյ, վազել հեռաւոր հիւսիսը, անհիւրընկալ իր կլիմայով, իր քաղաքական խստութիւններով, իր տարբեր կենցաղով, այնտեղ ուսում առնելու համար։ Եւ մի՞թէ հեշտ է այդ վ ա զ ը դէպի հիւսիս։ Ընդհակառակը շատ ծանր, շատ դժուար և շատ դժոխային։ Մեծ տանջանքներ, ահագին զոհաբերութիւն, մեծամեծ ծախսեր։

Առանց այն էլ միջնակարգ ուսումը շատ մեծածախս է Կովկասում։ Գաւառական ահագին քաղաքներն անգամ չունին միջնակարգ դպրոցներ. այնպէս որ գաւառացի վրացին, թիւրքը, հայը իր որդուն գիմնազիական ուսում տալու համար, պիտի մեծ քաղաքներ ուղարկի և ծախսի ա ւ նւազն 500 ռուբլի տարեկան, մի ծախս, որ մատչելի է ազգաբնակութեան մի չնչին տոկոսին միայն, մանաւանդ որ նա տևում է ամենաքիչը 10 տարի։ Եւ ահա այդ ահագին բեռը իր վրան առնելուց յետոյ իսկ, կովկասեցին յոյզը կրծքում պիտի մտածէ այն ծանր օրերի մասին, որ իր զաւակը պիտի անցկացնի մի բոլորովին տարբեր կլիմայի տակ, տարբեր պայմաններում, ուսում աւարտելու համար։ Այդ յոյզը պատահական չէ։ Նա արդիւնք է դառն փաստերի, արդիւնք թռքախտին զոհ գնացող այն բազմաթիւ դէպքերի, որոնցով սգաւորուած է կովկասեան ուսանողութեան ժամանակագրութիւնը Ռուսաստանի հիւսիսում. . .

Սակայն այս չէ միակ չարիքը։ Տանում են կովկասցուն հիւսիս, դէպի կենտրոնները, որպէս զի նա չմնայ իր ծննդավայրի մէջ և չխառնուի տ ե ղ ա կ ա ն հարցերին, չմասնակցի ա զ գ ա յ ն ա կ ա ն կեանքի ոևէ վտանգաւոր ճիւղին, այլ լուծուելով ռուս ուսանողութեան մէջ, դառնայ կատարելապէս ռուս, ենթակայ նրա ազդեցութեան, նրա մտքերին։ Շատ գեղեցիկ։ Բայց ահա ռուս ուսանողութիւնը, — իսկական ռուսներ, ծագումով, կրօնով, դէմքով, լեզուով, — ենթակայ դիւթող մտքերի հոսանքներին, ներշնչուած „կնուտածեռ“ հայրենիքի ազատութեան կարիքով, գոչ են բարձրացնում բռնապետութեան, դարևոր „կնուտի“ տիրապետութեան դէմ. գոչ՝ դէպի առաջ, գոչ՝ դէպի լաւագոյնը։ Երիտասարդական այդ գեղեցիկ ոգևորութեանը, իբրև արձագանք՝ ձայն է տալիս և կովկասեցիին. նա էլ լուռ չէ մնում. նա էլ է բողոքում, նա էլ է տալիս իր կարծիքը. . . Եւ ահա կատաղած իշխանութիւնը՝ „Դո՞ւք էլ“ աղաղակով նրանց յանցանքին աւելացնում է և ա զ գ ա յ ն ա կ ա ն մեծ, այժմեան Ռուսաստանում աններելի յանցանքը, և քշում նրանց դէպի յետ, դէպի „այնտեղ, որտեղից եկել էին“ կրկնակի սպառնալիքներով. . . Տաս օրայ ճանապարհ է անցնում՝ հայրենիքից դէպի հիւսիս տարուած և հիւսիսից դէպի հայրենիք քշուած հարաւեցին և տասն օրայ այդ դառն ճանապարհորդութեան մէջ նա հազար անգամ այս հարցն է դնում իր առաջ.—Կովկաս չեն թողնում մեզ. „տեղական հարցերով կը զբաղուէք“ ասում են. Ռուսաստան են տանում, բայց այնտեղ էլ հանգիստ չեն թողնում. „Ռուսական հարցերով էք զբաղուում“— ուրեմն ո՞ւր գնանք, ո՞ւր դիմենք. . .

Դէպի Եւրոպա՞։ Եւրոպա՞։ Ո՞րքան գրաւիչ է իրօք։ Սակայն կովկասեցու համար միշտ կապուած անթիւ դժուարութիւնների, բազմատեսակ անյարմարութիւնների հետ։ Դեռ սրանից 10 տարի առաջ, Աղեքսանդր III, իր դաժան բէժիմի հոսանքով տարուած, կամենալով միանգամայն ցամաքեցնել ոգևորութեան և շարժման այն աղբիւրը, որ ռուսական երիտասարդութիւնը բերում էր Արևմուտքից, վճռեց անցագիրը դարձնել տարեկան 120 ռուբլի, և այդպիսով չինական պատ կանգնեցնել իր „հաւատարիմ հպատակների“ և Արևմուտքի „քաղաքացիների“ մէջ։ Դա չաջողուեց։ Սակայն դժուարութիւնները նոյն ոգով շարունակուեցին, թէև ծածկուած, թէև քողի տակ։ Եւրոպա գնալ ուզող կովկասեցուն մանաւանդ՝ անցագիր չեն տալիս, կամ շատ դժուար։—Քաշքշում են ամիսներ։ Տալիս էլ՝ անուղղակի պայմաններ են դնում։ „Ո՞ւր էք ուզում գնալ“ հարցնում է նահանգական վարչութեան պաշտօնեան։ Խնդրողը կարկամում է. . . „Ես ձեզ խորհուրդ չեմ տալ գնալ Լօնտօն, Պարիզ, մանաւանդ Ժընէվ“— խորհրդաւոր կերպով աւելացնում է նա։ „Մանաւանդ Շվեյցարիա“, աւելի էլ խորհրդաւոր կերպով շեշտում է կառավարութեան ներկայացուցիչը։ Շվեյցարիա՞, դա մի փուշ է Պետերբուրգի աչքում, մի „օջախ“, որը, ո՜հ, ինչպիսի բերկրանքով քարուքանդ կանէր հիւսիսային թաթը. . . Եւ շատ անգամ դիմողը՝ հակառակ իր ներքին տենչանքների, ստիպուած է դիմել դէպի Վիէննա, դէպի Բերլին, դէպի գերմանական այլ քաղաքներ, իբրև „չարիքից փոքրագոյնը“. . .

Ահա մի կերպ երիտասարդը Եւրոպա է։ Սակայն ազատ երկրի մէջ անգամ՝ նա ազատ չէ։ Ռուսական լրտեսութեան ամենազօրեղ աչքերը, մարմնացած հիւպատոսարանների, և դեսպանատների անթիւ պաշտօնեաների անհամար „գաղտնի գործիչների“ անձնաւորութեան մէջ, շարունակում են հսկել նրան, հետևել նրա ամեն մի քայլին և „տեղեկագրել ուր հարկն է“։ Մի փոքրիկ մանիֆէստասիօն, սօցիալիստական ժողովների աննշան մասնակցութիւն, ոևէ մասնակցութիւն Արևմտեան կեանքի նոր, գրաւիչ շարժումներին, վերջապէս ոևէ գրուածք, — մանաւանդ եթէ նա տպագրուած է մի ծայրայեղ քաղաքական օրգանի մէջ — բաւական է, որ ռուսահպատակը դառնայ անվստահելի, կասկածոտ և նոյնիսկ վտանգաւոր կայսերական կառավարութեան աչքում. . .

Անցնում է մի քանի տարի։ Բեռնաւորուած գիտութեան պաշարով, թևեր առած ազատ մտքերի և ազատ կարգերի աշխարհում, երիտասարդ ուսանողը դառնում է Ռուսաստան՝ բռնուած գործելու, գրելու, աշխատելու բոցով։ Նա երազում է հրաշքներ գործել, մտքեր յուզել, գաղափարներ տարածել. մարդոց ամբողջ շարքեր քաշ տալ իր յետևից. . . Որպիսի ցնորք, որպէսի միամտութիւն։ Նա — դիցուք հայ է—չի կարող մի քայլ անգամ անել առանց զգալու, որ „ամենազօր ձեռքը“ կապում, կաշկանդում է իրան։ Ուսուցիչ է ուզում լինել

ոևէ դպրոցում.—արգելք. արտասահմանում սովորածներին կառավարութիւնը վատ աչքով է նայում։ Ուզում է մի լրագիր, ամսագիր հիմնել. — արգելք. եւրոպայից եկածին կառավարութիւնը թոյլ չի տալիս։ Ուզում է մասնաւոր դպրոց հիմնել.—արգելք։ կառավարութիւնը այդ իրաւունքը միայն Ռուսաստանում աւարտածներին է տալիս։ Ուզում է դասախօսութիւններ կարդալ—արգելք. նա վստահութիւն չի վայելում կառավարութեան աչքում։ Թող նա փորձէ պետական ոևէ պաշտօն որոնել, ոևէ զբաղմունք խնդրել — նրան սոսկալի մի ժպիտով դէպի դուռը ցոյց կըտան։ „Հայ, այն էլ Եւրոպայից եկած“ — դա հէնց ինքը յեղափոխութիւն է մարմնացած։ Թող փորձէ բժշկութեան կամ իրաւաբանութեան ասպարէզը մտնել. — հարիւրաւոր դժւարութիւններ, հասցրած այն աստիճանին, որ նրան յաճախ յուսահատութեան դուռն է տանում։ Եւ որ մէկը ասենք...

Էլի մի դառնութիւն։

„Քաղաքների խտրութիւնը“ միայն արտասահմանում չէ, որ ստեղծւած է արթուն կառավարութեան ձեռքով, այլ նոյնիսկ պետութեան ներսը։ 1898-ի ուսանողական շարժումներից յետոյ, „լուսաւորութեան“ մինիստրութիւնը մի նոր կանոն ստեղծեց, որը թոյլ չի տալիս գիմնազիան աւարտող երիտասարդներին ընտրել այն քաղաքը, ուր նա կամենում է, յարմար է տեսնում։ Այդպէս, օրինակ, կովկասեցին չէ կարող գնալ Պետերբուրգի կամ Մոսկվայի համալսարանը։ Նրանց դռները փակ են նրա առաջ։ Նա կարող է, ուզի չուզի, մտնել Կիեվի, Խարկովի, Օդէսայի համալսարանը։ Դիցուք նրա ծնողները ապրում են Մոսկվա, կամ անձնական ոևէ պատճառով նա մեծ յարմարութիւն ունի լինելու Պետերբուրգ. — այդ միևնոյն է կառավարութեան համար։ Արգելւած է և ուրիշ ոչինչ։

Եւ ապաբախտ այլազգիները.—այդպէս են անւանում ոչ-ռուսներին ցարերի թագաւորութեան մէջ—վարժւած են այդ խտրութեան դեռ առաջին քայլերից, նոյնիսկ տարրական կրթութեան հիմնարկութիւններից։ Երևակայեցէք, օրինակ, որ միևնոյն գիմնազիան կամ դպրոցը մտնել են ուզում մի քանի հայեր, ռուսներ և վրացիներ։ Հայը կամ վրացին կարող են լինել աւելի ընդունակ, աւելի պատրաստւած։ Սակայն այդ արտօնութիւն չի տալիս։ Գիմնազիայի կառավարիչը հրահանգ ունի — գա՛ղտնի հրահանգ — սահմանափակել այլազգիների թիւը. թոյլ չտալ որ նրանք մի որոշ տոկոսից անցնին դպրոցի մէջ և ահա հայ ծնողը, կսկիծը սրտում, տեսնում է, որ իր որդին դուրսը պիտի մնայ, թէև աւելի արժանի է, և այդ միայն այն պատճառով, որ նա այլազգի է, ուղղափառ չէ...

Եւ այդ ամէն օր, ամէն քայլափոխում։

Դա որոշ „պոլիթիկայի“ յաջորդական գործադրութիւնն է, մի ծայրից մինչև միւս ծայրը, ամենատարրական հիմնարկութիւններից մինչև ամենաբարձրը, նոյնքան զօրեղ գիտութեան և կրթութեան վայրերում, որքան բուն ոստիկանական վայրերում։

Խե՜ղճ Ռուսաստան։

Գիտութիւնը և արդարութիւնը չէ, որ կառավարում է քո բախտը, քո ապագան, քո պետական կազմը, այլ միայն ու միայն ոստիկանական պոլիտիկան։ Ոստիկանութիւն պալատում, ոստիկանութիւն մինիստրների կաբինետում, ոստիկանութիւն համալսարանում, ոստիկանութիւն գիտութեան տաճարներում։ Գիմնազիան այլևս կրթական վայր չէ, այլ պոլիտիկայի ակումբ։ Համալսարանը՝ գիտութեան ամբիոն չէ, այլ կառավարութեան կաճառ։ Ոստիկան է ռեկտորը։ Ոստիկան դարձան և պրոֆէսորները։ Ոստիկան են ուզում դարձնել և ուսանողներին...

Կը յաջողի՞ արդեօք։

Դժւար։ 30 տարւայ համալսարանական պատմութիւնը, նախշւած ուսանողական մեծ և փոքր ցոյցերով, դրոշմւած երիտասարդ հոգիների անխարդախ բողոքի կնիքով, մեծ հաւատ է ներշնչում դէպի ապագան, դէպի վաղորդեան արշալոյսը, որ պիտի ծագի Հին-Ռուսաստանի աւերակների միջից բարձրացող Երիտասարդ-Ռուսաստանի վրայ...

Երկա՞ր պիտի սպասենք այդ արշալոյսին...

Է. ԱԿՆՈՒՆԻ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՍԵՐՈԲ-ԱՂԲԻՒՐ

1895-ի աշնան, ճիշդ այն ամսուն, երբ սուլթանական դաւադրութիւնը կազմակերպւած էր ընդհանուր կոտորած առաջ բերելու համար հայաբնակ գաւառներու մէջ, Սերոբ բաւական զօրաւոր խմբով մը, երկինքէ իջածի պէս, ոտք կը դնէր հայրենի հողին վրայ։ Անոր Սոխորդ հասնելու երկրորդ օրը լուր կուգայ թէ Բաղէշը կոտորւեր և շրջակայ գաւառներուն մէջ ալ ջարդի սարսափ կը տիրէ։ Սերոբ իր խումբի 27 տղաքներէն 15-ը կը բաժնէ կոտորածի ահը կեցող գիւղերուն մէջ, խոստանալով որ վտանգի րոպէին ուր է ուր չէ օգնութեան կը հասնի. իսկ ինք 12 հոգով կըսպասէ Սոխորդ գիւղի մէջ։ Բաղէշի կոտորածի գուժերուն երկրորդ օրը, Սոխորդը յանկարծ սև ամպերու պէս կը շրջապատւի կատաղի քիւրդերով, որոնք կուզէին այդ գիւղին առաջին հարւածը տալ և տկարացնել զայն, միւս մնացած գիւղերը այլևս հեշտ էր ջարդել, թալանել ու աւերել։ Քիւրդերը սակայն երբէք մտքերնէն չէին անցներ որ այնտեղ յեղափոխականներ կարող էին գտնւիլ. միմիայն կը մտածէին գիւղացիներու մասին, որոնք իրենց կարծիքով, ինչքան ալ կտրիճ ըլլային, անզէն՝ բան չէին կրնար ընել 5-600 զինւած քիւրդերու դէմ։ Ատոր համար ահագին պատրաստութիւններ տեսած էին նախօրօք, էշեր, սայլեր, ձիեր բերած էին հետերնին, որպէսզի գիւղին ճոխ աւարն ու կողոպուտը կարենան բեռնալ և իրենց վրանները փոխադրել։

Քիւրդերը „սալավաթ“ կանչելով, փոթորկալից ամպերու պէս, հարաւային կողմէն առաջ կը խուժէին։ Գիւղացիներուն կուռող և կտրիճ մասը գիւղէն դուրս կելլէ, և հին պատերազմիկներու պէս, սայլերէ և կառքերէ թալաթոս պատնէշներու ետևէն, կը պատրաստւի դիմադրելու քրդական խաժամուժ վոհմակին։ Քիւրդերը կը հասնին գերեզմանոցէն քիչ հեռու, որ ձորով մը կը բաժնւէր գեղէն, և ուրկէ քիչ մը վեր Սերոբ իր փոքրիկ խմբով թաքստած էր։ Հազիւ քիւրդերը գերեզմանոցէն և ձորէն անցնելով գիւղացիներուն դէմ առ դէմ կուգան կուռելու, երբ Սերոբ իրեներուն հետ, ձորէն իջնելով կը մտնէ գերեզմանոց և քիւրդերը երկու կրակի մէջ կ՚առնէ։

քիւրդերը լեղապատառ և շշմկած խառնիխուռն կը փախչին, ձգելով 7 դիակ, որոնց մէկը իրենց շէյխը, և 40 հոգի ալ հրացանաւոր գերի կիյնան։ Գիւղացիք անոնց ձեռները կապ կը տանին գիւղ։ այդ պահուն գայմագամը վրայ կը հասնի և զէնքերը ետ առնելով կը յանձնէ գերիներուն և կազատէ զանոնք, խորհուրդ տալով որ ուրիշ անգամ Սոխորդի վրայ յարձակելու անխոհեմ յիմարութիւնը չունենան։ Քիւրդերը կը բողոքեն ըսելով՝ „էֆէնտիմ, այս կեավուրները չէին, որ մեզի յաղթեցին, այլ Մոսկովի կեավուրներ բռնեցին մեր ետևէն և երկնքէն կրակ կը թափէին մեր վրայ. մեր գնտակները անոնց չէին հասներ, իսկ անոնցները մեզմէն մարդ չթողուցին վար գլորեցին"։ Գայմագամը առերեսս չուզեր հաւատալ քիւրդերուն, զորս կը ճամբէ գիւղէն, իսկ ինքը 15 ոսկի առնելով հայերէն կը ծածկէ քիւրդերուն բողոքը ու կը հեռանայ։

Այս դէպքին յաջորդ օրը լուր կը հասնի թէ Տ... գիւղը պաշարեր է։ Սերոբ իսկոյն իր խումբին հետ գիշերով օգնութեան կը հասնի և քիւրդերը առուրթառ կը հանէ։

Վերջապէս Ախլաթի ան բոլոր գիւղերը, ուր խումբէն 2-3 հոգի կը գտնուէին, կոտորածներէ և կողոպուտէ զերծ մնացին, բացի ետ կամ հեռուները ինկած փոքրիկ գիւղերէ, որոնք անխնայափելիօրէն տաւարի և ոչխարի կորուստներ տուին։

Այդ աղէտալի թուականին, Հայաստանի արիւնի ու կրակի տարին, Ախլաթի 27 գեղերը Սերոբի խումբին շնորհիւ անվնաս մնացին։ Ամէն անգամ որ քիւրդերը հայոց գեղերէն աւարներ տանէին, հարևան գիւղերէն կը դիմէին Սոխորդ գեղ „Աղբիւր"-էն օգնութիւն խնդրելու համար։ Աղբիւր կայծակի պէս կը հասնէր և արիւնարբու աւազակներուն բան կեր չէր ըներ։ Կառավարութիւնը կը զարմանար այդ արտասովոր երևոյթի վրայ, քիւրդերը սովալլուկ գայլերու նման փորերնին կը ճմռէին և իրենց կորսընցուցած աւարները կողոպային, իսկ հայերը կ'օրհնէին Սերոբի անունը և անոր համբաւին թևեր տուած, հրաշագործ սուրբի պէս կը պաշտէին զայն։ Այդ օրէն իր անունը կնքեցին Աղբիւր, որ ժողովրդի բերնին մէջ առասպելական դիւցազնի մը մեծութիւնը առաւ։ Ամէն հասակէ ու սեռէ մարդիկ կը ղձային տեսնել այն մարդը, որուն խօսքերը պատգամի նշանակութիւնը ունէին խաղաղութեան, ազատութեան ծարաւի հայ ժողովրդին մէջ։

Սերոբ ոչ միայն կը կուռէր զէնքով իր հայրենի թշնամիներուն դէմ, այլև բրօբականտ կընէր ժողովրդին ինքնաճանաչութիւնը արթնցնելով. գիւղերու մէջ կազմակերպութիւններ կը մտցնէր, և ուր որ ոտք դնէր կեանք ու քաջալերութիւն կը տանէր հետը։ Սերոբի այս խաղաղ և գաղտնի գործունէութիւնը կարգ մը ապիկար նախանձոտներու չարակամութիւնը գրգռեց, որոնք ամէն բան օրը օրին կառավարութեան ականջը կը լեցնէին, այնպէս որ Ախլաթի գայմագամը քանի քանի հեղ հարցաքննեց Սոխորդի գիւղապետ, Սերոբի մեծ եղբայր Մխէն։ Սակայն Մխէն կը հաւաստէր թէ իրենց այդ փոքրիկ եղբայրը 10 տարի առաջ պանդուխտ երկիր գացած ըլլալով, իրենց լսածին, 4-5 տարի առաջ մեռեր է Ռուսաստանի մէջ, ապա թէ ոչ, կաւելցնէր, տարին անգամ մը մեզի նամակ կը գրէր։

Թիւրք կառավարութիւնը խաչած գարի չէր կլլեր. որսի շան պէս ականջները տնկած, լրտեսներու և մատնիչներու աջակցութիւնով, լարած ուշադրութիւնով Սերոբի քայլերուն կը հետևէր։

Աղբիւրի անունը շատ տարածուած ու ժողովրդական եղած էր։ Տ..., գիւղի հարսներ ու աղջիկներ հիացմունքով կը պատմէին որ „Աղբիւր մէկ ձեռքով մէկ անգամէն 7 քիւրդի գլուխ կտրեր է"։ Ուրիշ անգամ մը բոմիներու (թիւրք զօրք) ձեռքէն ազատուելու համար ծովը կը նետուի և երեք օր լողալէն ետքը Առտէր ու Լիմ անապատներ (կղզիներ) ցամաք կելլէ։ Ասոնք ջերմեռանդ ուխտաւորի պէս կարօտը կը քաշէին անգամ մը գոնէ Սերոբը տեսնելու և խոստացեր էին իրենց օժիտի կէսնուկէսը միշտ նուիրել Աղբիւրի անուան։

Ժողովրդին վառ և անձկարօտ երևակայութիւնով չափազանցուած այս զրոյցներուն մէջ ճշմարտութեան խոշոր գիծ մը կար սակայն։ Իր հիանալի և կըտրիճ ընկերներէն մէկը, Տիգրան, սապէս կը պատմէր, „Գիշեր մը Սերոբ, Սիմոն և ես քաղաքէն կը վերադառնայինք, բացի ատրճանակէ և խանչէրէ ուրիշ զէնք չկար վրանիս։ Մեր ծրագրին հակառակ հրացան չէինք վերցուցեր այդ օրը։ Ռահվահի դուրան անցնելիս, բլրակի մը վրայ յանկարծ առջևնիս տնկուեցան 7 հրացանաւոր քիւրդեր. „Դուք ո՞վ էք, հարցնելը, և ձեռքերնին հրացանի բլթակին տանելը մէկ եղաւ։ Այդ րոպէին ձեռքս կողքիս տարի ատրճանակս քաշելու համար, սակայն յանկարծ սարսափելի աղաղակ մը գոռաց ականջիս, տեսնեմ քիւրդ մը ոտքերուս տակ կը տապլտկի, իմ առաջին գործս եղաւ ուրեմն դանակը քաշել և կտրել գլուխը, երբ նկատեցի որ Սիմոնն ալ նոյն բանը ընելու զբաղած է։ Քայլ մը հեռու երրորդի մը գլուխն ալ թռցնելով, դիակները քաշեցինք ճամբուն եզերքը ձորի մը մէջ աւազներուն տակ թաղելու համար։ Սերոբը քիչ մը հեռուէն վազէվազ եկաւ և մեր ճակատը համբուրելով ըսաւ. „ընկերներ, ձեր հոգուն մատաղ, եթէ դուք չըլլայիք, ես ի՞նչ պիտի ընէի"։ Մինչդեռ ամէն բան ընողը ինք էր, մենք միայն դիակները թաղած էինք"։ Ահա թէ ինչո՞ւ համար ծովեզերեայ գիւղի աղջիկներ, հիացմունքով կը պատմէին որ Աղբիւր մէկ հարուածով 7 քիւրդի գլուխ կտրեր է։ Ծովը լողալն ալ սա է որ, իր, Գուրգէնի և Սիմոնի խումբերը տեղէտեղ անցնելու և փախցնելու համար նաւավարական արագ դիւրութիւններ գտած էր։

„Օր մը, կը պատմէ ականատես ընկերակից մը, Սոխորդ գեղն էինք, երբ լուր բերին թէ գայմագամը 20-30 ձիաւորով գիւղը կուգայ։ Ամէնքնիս փութացինք գեղէն դուրս ելլել. բայց երկիւղը պատեց զիս, խորհելով որ վրանիս զէնք չունէինք դիմադրութեան համար. եթէ զաբթիէները գան, կը մտածէի, մեզ ոչխարի պէս կը բռնեն ու գերի կը տանին։ Աչքերս շուտշուտ կը դարձնէի լեռներու կատարներուն՝ Սիփանի հպարտ, ձիւնապատ սարին, ուր վերջալուսի տկար ցոլքերը կը սկսէին մարմրիլ։ Քիչ մը սիրտ առի որ մութը կը կոխէր, որով կարող պիտի ըլլայինք դիրքերնիս փոխել։ Ցանկարծ այդ միջոցին գեղէն մարդ մը եկաւ հևիհև և յայտնեց որ գայմագամը Մխէն կապեր և ծեծի տակ կուզէ անկէ խոստովանանք առնել։ Սերոբի դէմքը մթրկեցաւ և լայն ճակտի վրայ փրփրակոծ ծովու պէս ալիքներ գոյացան։ Այդ պահուն խումբը հեռացնելով չորս ընկեր մնացինք։ „Պէտք է հիմակ գիւղին վրայ երթանք, ըսաւ

Սերոբ, ի՞նչ կը լայ ըլլայ"։ Ծիծաղեցանք, քանի որ զէնքի կտոր մը չունէինք։ Սերոբ ինքն ալ ծիծաղեցաւ, „բա՜, զէնքի հաշիւը հեշտ է, ես իսկոյն կը խաչակնքեմ այս ժայռին և ան կուտայ մեր չունեցածը։ Ձե՞ս գիտեր որ եթէ Աստուած ուզենայ քարերէն հաց կը պատրաստէ և ժայռերէն ջուր"։ Աս ըսելով, Սերոբ, — հրաշագործ Սերոբը, ինչպէս կըսէին ծովեզերքի հայ աղջիկները,— երկու ընկերով մօտեցաւ ժայռին և բարձրաձայն ծիծաղելով սկսաւ խաչակնքել։ Հուժկու երիտասարդները մեծ քար մը վար առնելով բացուեցաւ փոքրիկ դուռ մը, ուրկէ հազիւ մէկ մարդ սողալով ներս կրնար սպրդիլ։ Ներս մտնող ընկերը սկսաւ մէկիկ մէկիկ դուրս տալ պատանքաւոր ննջեցեալները։ Սերոբ և միւս ընկերը յարութիւն կուտային հրացաններուն զանոնք մերկացնելով, որոնց իւրաքանչիւրին կապուած էր երեք փամփշտաւոր գօտի։ Քիչ յետոյ ժայռը իր բնական դիրքը առաւ։ Զէնքերը՝ վար, ձորին մօտ իջեցուցինք և խումբը զինելով կը պատրաստուէինք գիւղին վրայ գնալ, երբ Սերոբի միջնեկ եղբայրը և երկու պատուաւոր գիւղացիներ եկան խնդրելու Սերոբէն, որ ետ կենայ իր դիտաւորութենէն, ապահովելով որ իրենք կարողացեր են գայմագամը հանդարտեցնել, որ քանի մը հաւ և քիչ մը փիլաւ պիտի չխտկէ ու գնայ։

„Սերոբ և իր խումբը հանգիստ կարող էին անձայն, անշշուկ գիւղ իջնալ և հոն գիշերել, բայց այդ միջոցին շրջակայ քիւրդերը թիւրք սպայ մը սպաննած ըլլալնուն, Բաղէշի Ալայ բէկը գունդ մը զօրքով Սիփանի կողմերը եկեր հայտարանցիներուն մէջ, աւազակները փնտռելու համար։ Կասկածելով որ թիւրք բանակին առիթ մը կըլլայ Սոխորդի վրայ յարձակելու մանաւանդ որ չար լեզուներ այդ սպանութիւնը Սերոբին կը վերագրէին — խումբը որոշեց բարձրանալ Նեբրովթի վրայ և հոն բաց օդի մէջ լուսցնել։ Գիշերը լաւաշներու մէջ փաթաթուած մսի խորովածներով լաւ ճաշ մը ընելէ յետոյ, ճամբայ ելանք լեռան գագաթը բարձրանալու։ Հազիւ կէսը վեր ելեր էինք, երբ ցուրտը զգալի ըլլալ սկսաւ, տեղ տեղ ձորերու մէջ քարացած ձիւնակոյտեր, իսկ բաց տեղերն ալ խոտը հազիւ երկու մատ բարձրացեր էր։ Լեռան գլուխը սառ ցուրտ մը կար, որով ստիպուեցանք այրի մը մէջ ապաստանիլ։ Լայն քարայրին մէջ լաւ կրակ մը վառելով, շուրջը բոլորուեցանք ու սկսանք խօսիլ ու վիճել։ Ընկերներէն ոմանք իրենց զէնքերը կը մաքրէին և կ'եղոտէին. քանիներ զոյգ զոյգ և հերթով լեռան ծայրերուն վրայ պահնորդութիւն կընէին։ Լուսը ճեղքելուն վար, Նեբրովթի լճին ափը իջանք ու քաղցր ջրով լուացուելէ յետոյ իբր մարզանք նշանառութեան փորձեր ըրինք։ Այդ օրը աչքովս կրցայ հաստատել, որ Սերոբ աննման հրացանաձիգ մըն էր. իր գնտակը ոչ մէկ անգամ չվրիպեցաւ նպատակէն։ Իսկ ես ամաչ կըզգայի վարժապետութեանս վրայ, որ գրիչ շարժել միայն սորված էի։ Այդ զբօսանքի ատեն յանկարծ հրացանի պայթիւն մը լսուեցաւ լեռան մէկ խորքէն, անգիտակ եղելութեան, ամէնքը պատրաստի կեցան ոևէ պատահականութեան դէմ դնելու համար։ Մէյ մըն ալ տեսնենք պահապանին մէկը, այծեամ մը շալկած եկաւ և Սերոբին նուիրեց իր անմեղ ու համեղ որսը ընկերներուն առաւօտեան նախաճաշի համար։ Սերոբ ոչ միայն չընդունեց այլև խնդրեց ընկերներէն, որ ժողով ընեն ու դատեն այդ անկարգապահ ընկերը։ Այդ քաջ որսորդը Սերոբի ամենասիրելի ընկերը, Սիմօնն էր. բայց Սերոբ անողոք եղաւ և պահանջեց որ խիստ պատիժ տնօրինեն զերբենք խաբած և անակնկալ դրութեան մէջ ձգած ըլլալուն։ Սիմօն տասնապետ էր և ծայր կոմիտէին պատուոյ խաչ ստացած էր. Սերոբ առաւ անոր խաչը և զայն պարզ զինուորի աստիճանին իջեցնելով, շաբաթ մըն ալ բանտարկեց։ Այդ մասին գրեց նաև ծայր կոմիտէին։

„Սերոբ ժողովի ու վիճաբանութեան ատեն գառնուկ էր և համբերատար, թող պոռային կանչէին երեսն իվեր, մտիկ կընէր, նոյնիսկ եթէ բռունցք բարձրացնէին կը լռէր, բայց օրինապահութեան ու կարգապահութեան մէջ կտրուկ և խստասիրտ էր, չէր ներեր նոյնիսկ հարազատ եղբօրը։ Իր ձեռքով քանի՜ քանի՜ դաւաճաններ ու վատ ընկերներ դատապարտուած էին արդէն։

„Այդ նշանաւոր և հետաքրքիր դատը լմնցած էր, երբ տեսանք Սոխորդէն երկու հոգի դէպի մեզի կուգային։ Հեռադիտակով ճանչցանք ով ըլլալնին. այդ երկու պարոնները եկած էին իմաց տալու գայմագամին մեկնիլը, որու վրայ իսկոյն ճամբուորեցանք դէպի գիւղ, երբ Սօսէն եկաւ կէս ճամբան դիմաւորեց ու հիւրընկալեց մեզ գորովասիրտ հոգածութիւնով մը"։

Ահա Սերոբի շահեկան և անձնուէր կեանքը իր ընկերներուն հետ, կանցնինք այժմ անոր բուն յեղափոխական փայլուն և ալեկոծ ասպարէզին։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ)

VI

Մինչ մեծ պետութիւնների ուշադրութիւնը կլանուած էր արևելեան հրատապ խնդրով, մինչ Անգլիան և Ֆրանսիան — երկու հզօր դաշնակիցներ — ռուսական յարասիան — երկու հզօր դաշնակիցներ — ռուսական յարձակումն վտանգի դիմաց՝ մաքառում էին Բոսֆորի ափերին, ձգտելով դուրս մղել այնտեղից Ռուսիոյ ազդեցութիւնը — մի փոքրիկ, աննշան պետութիւն Ապենինեան թերակղզու վրայ, Ալպեան ստորոտներում՝ իր պատմական կոչման գիտակցութեամբ զինուած՝ ճիգ էր թափում բարձրացնելու իր հպատակ ժողովուրդը նիւթապէս ու բարոյապէս զարգացնելու երկիրը. դրա հետ միասին ազատ ու գաղտագողի պրոպագանդով արծարծում էր նա բովանդակ Իտալիայում „ազգային միութեան" մեծ գաղափարը և այդպիսով քայլ առ քայլ պատրաստւում էր իրագործելու իր պատմական վեհ առաքելութիւնը։ Պիեմոնտն էր դա, Վիկտոր Էմանուէլի և Կավուրի Պիեմոնտը, որ իբրև անկախ, հեղինակաւոր մարմին ստրուկ ու ջլատուած իտալական աշխարհում, եղաւ քիչ յետոյ կենտրոն-կորիզ համաիտալական միութեան։

1848-ի Միլանի ու Նապոլի ջարդերից յետոյ Իտալիան ընկաւ նորից Աւստրիայի տիրապետութեան տակ և 12 տարի շարունակ կարմիր ու ճերմակ տէռորը թագաւորեց Ապենինեան մանր-մունր իշխանութիւնների մէջ։ Մի տեսակ ճորտական հպատակութեան ենթարկուած՝ Իտալիայի բազմաթիւ իշխանները հանդիսանում էին հլու կամակատարներ աւստրիական միահեծանի,

Միակ անկախ ու հայրենասէր իշխանն էր համարում Վիկտոր Էմանուէլ, որին և յառել էր իր աչքերը ազատութեան ծարաւ ամբողջ Իտալիայի ազգաբնակութիւնը։

Պիէմոնտը սիրով ապաստան էր տալիս Ապենինեան այլ և այլ ծայրերից եկած փախստական յեղափոխականներին. նա մարմնացնում էր առժամապէս համայն իտալական հայրենիքը։ Հետզհետէ մերձենում էր նա հարեւան Ֆրանսիային, անպայման վստահ լինելով նրա աջակցութեան վրայ, և Նապոլէոն III իտալական ազատութեան ծրագրով յափշտակուած՝ խրախոյս էր կարդում Վիկտոր Էմանուէլին։ Իր անզուգական մինիստրի (Կավուրի) դիւանագիտական տաղանդի շնորհիւ Վիկտոր Էմանուէլ ամրապնդեց իր բարեկամութիւնը հզօր Ֆրանսիայի հետ և Պիէմոնտ դրեց Նապոլէոն III-ի հովանաւորութեան տակ։ Դա արդէն ամենախոշոր գրաւականն էր նրա դատի աջողութեան։ Պիէմոնտ համակրելի էր նաև Մեծ-Բրիտանիայում. նա իր ուժերի չափ նպաստել էր երկու դաշնակից պետութիւններին Ռուսիոյ դէմ մղած Ղրիմի պատերազմում, այն ինչ Աւստրիան այդ նոյն պատերազմի մէջ բռնած երկմիտ դիրքով իր դէմ էր լարել երկու արևմտեան մեծ պետութիւններին։

Նապոլէոն III յարմար առիթի էր սպասում՝ իր զօրքն ուղղելու դէպի Ալպերը. իսկ Աւստրիան նախատեսնելով անխուսափելի ընդհարումը, վաղօրոք իր պատրաստութիւններն էր տեսնում։ Կարճ ժամանակամիջոցում նա հաւաքեց Տեսսին գետի ափին (Լոմբարդիա) 200,000-ի չափ զօրք։ Ապարդիւն եղան Անգլիայի կողմից արուած միջնորդութեան փորձերը և ապրիլի 29 (1859) աւստրիական զօրքն անցաւ Տեսսինը։ Նապոլէոն III դիտեց այդ քայլը իբրև պատերազմի յայտարարութիւն և անմիջապէս հրաման տուեց ֆրանսիական զօրքին արշաւել աւստրիացիների դէմ։ Վերջիններս մինչ այս, մինչ այն գրաւել էին արդէն ամբողջ Պիէմոնտը։ Նապոլէոն III անձամբ գնաց պատերազմի դաշտը։ Ֆրանս-պիէմոնտեան զօրքերը միացած Մակ-Մահոնի և Գարիբալդիի հրամանատարութեան տակ՝ բազմաթիւ կէտերում՝ կռուի բռնուեցին թշնամու հետ. կոտորածը մեծ էր։ Միմիայն Մաջենտայի արիւնահեղ կռուում ֆրանսիացիք տուին 4,000 զոհ, աւստրիացիք մօտ 20,000 սպանուածներ ու վիրաւորուածներ և 7,000 գերի բռնուածներ։ Դա առաջին փայլուն յաղթանակն էր դաշնակից զօրքերի և յունիսի 8-ին Ֆրանսիայի թագաւորը Վիկտոր Էմանուէլի հետ Միլան մտնելով, դիմաւորուեց ազգաբնակութիւնից աննկարագրելի խանդավառութեամբ, որպէս մի ազատարար հրեշտակ։ Կռիւը շարունակուեց ծանր կորուստներով երկու կողմերից էլ։ Սարսափելի էր մանաւանդ Սոլֆէրինոյի ճակատամարտը, ուր ֆրանսիացիք կորցրին 12,000 մարդ, իսկ աւստրիացիք եռապատիկը։ Աւստրիան շտապեց ստորագրել (Ցիւրիխում) խաղաղութեան դաշինք, որով զիջեց Վիկտոր Էմանուէլին ամբողջ Լոմբարդիան։ Նապոլէոն III իր արած ծառայութեան փոխարէն պահանջեց ու ստացաւ Սավոյա և Նիցա։

Իտալիայի „միութիւնը“ իրականանալու վրայ էր։ Աւստրիական զօրութիւնը խախտուեց Ապենիններում, իսկ Պիէմոնտն այժմ աւելի ուժեղ ու հեղինակաւոր՝ կամաց-կամաց, բռնի կամ խաղաղ ճանապարհով միացրեց իրեն իտալական միւս գաւառները։ Երկրի ամէն մի անկիւնից դառն գանգատներ էին լսում բռնակալ իշխանների կամայականութիւնների մասին։ Ցեղափոխական տրամադրութիւն էր տիրում ամբողջ Իտալիայում։ Մ ա ձ ի ն ի՝ անխոնջ դաւադիրը կազմակերպում էր շարունակ կարբոնարիների խմբեր, պատրաստում էր նրանցից մարտական լեգէոններ։ Իտալիայի անկախութեան դրօշը ձեռքն առած՝ անվեհեր Գ ա ր ի բ ա լ դ ի իր կամաւորներով արշաւում էր անդադար Ապենինների մի ծայրից միւսը, ապստամբեցնում էր ամբողջ գաւառներ, անձնատուր անում տեղական իշխաններին և ենթարկում նրանց Պիեմոնտի հրամանատարութեան։ Ժողովուրդը ամենուրեք ցնծութեամբ էր դիմաւորում Գարիբալդիին, որի մէջ մարմնացած էին տեսնում տանջուած հայրենիքի դարաւոր բաղձանքները։

Հայրենասէրների իղձը կատարուեց։ 1861 թ. 18 փետրուարի բացուեց իտալական առաջին պարլամենտը, որ և հռչակեց Պիէմոնտի իշխան Վիկտոր Էմանուէլին թ ա գ ա ւ ո ր Ի տ ա լ ի ա յ ի...

* * *

Փոքրիկ ազգերի ազատութեան դատը մի տեղ շահում էր, մի այլ տեղ կորցնում։ Ազատութեան գաղափարը իր կապրիզներն ունի։ Նա չի սիրում հաւասար, ուղղագիծ յառաջդիմութիւն. մի տեղ նա առաջ է սլանում հսկայի ոստիւններով, մի այլ տեղ կքւում է, յետ ու յետ մղւում դահճի հարուածներից և ընդերկար մարում։ Ազատուեց Իտալիան աւստրիական լծից և մի երկու տարուայ ժամանակամիջոցում գլուխ բերեց ազգային միութեան վիթխարի գործը. ազատուեցին մի շարք Բալկանեան և ուրիշ կիսավայրենի ցեղեր՝ սերբեր ու մոլդաւներ, սև-լեռնցիք ու Մարոնիտներ, որոնք դեռ նոր էին մկրտուում արևմտեան քաղաքակրթութեան աւազանի մէջ, դեռ նոր էին առնում սահմանադրական կարգերի համ ու հոտը... Բայց տեսէք միւս կողմից որպիսի դառն, աղեխարշ ճակատագրի էին մատնուած ուրիշ, աւելի բարձր ու առաջադէմ ազգեր, որոնք վաղուց ճաշակել էին եւրոպական քաղաքակրթութեան պտուղները և սակայն մինչև XIX դարի վերջին շրջանը մնում էին կաշկանդուած թունաւոր մի ռէժիմի տակ, ասիական անսանձ բռնութեան ճանկերում։ Խօսքս գլխաւորապէս լ ե հ ե ր ի մասին է։

Մենք տեսանք, թէ որպիսի աղետալի վախճան ունեցաւ նրանց առաջին փառահեղ ապստամբութիւնը (1830-31)։ Տեսանք թէ ինչպէս ռուսական խարազանը անխնայ հնձեց լեհ երիտասարդ սերունդը և ենթարկեց Վարշաւան բացառիկ օրէնքների։ Տեսանք, թէ ինչպէս լեհ զաւակները իրենց սիրելիների հետ ողբ ու հառաչանքով Սիբիրի ճանապարհը բռնեցին և շարան-շարան գնացին անդարձ, յաւիտեանս թաղուելու սառնամանիքների մէջ...

Այո՛, ռուսական կնուտը ցոյց տալ ուզեց լեհերին, որ անմիտ խիզախութիւն է՝ ըմբոստանալ նրա դէմ և որ աստուածային պատգամների բերան՝ երկգլխեան արծիւը պիտի տարածէ յաւէտ իր հզօր թեւերը սպիտակ ցարի բոլոր հպատակների վրայ։

Այդպէս չէին մտածում սակայն Լեհաստանի կտրիճները։ 33 տարուայ խորքից յետոյ նրանք փորձեցին նորից ցոյց տալ աշխարհին թէ որպիսի ճչացող անիրաւութիւն է ծանրանում այդ լուսաւոր ցեղի վրայ։ 33 տարուայ առերևոյթ հնազանդութիւնից յետոյ Վարշաւան

նորից թափ տւեց առիւծի բաշը և ոտքի կանգնեց... Կը յաջողէ՞ն արդեօք... Այդ միտքը գուցէ շատ էլ չէր տանջում ապստամբ լեհերին։ Գուցէ նրանց մղում էր այն գիտակցութիւնը միայն, որ հայրենիքի ազատութեան համար թափած արիւնը ապարդիւն չէ երբէք...

Եւ ահա 1863-ին վերսկսեցին Լեհաստանում արիւնոտ ցոյցերը։ Լիտվինները միացան իրենց վաղեմի դաշնակիցներին և լեհ ու լիտվին համերաշխ բարձրացան ընդհանուր թշնամու դէմ։ Մօտ 6-8 հազարից կազմւած խառնիճաղանճ մի բանակ էր դա, որ խիզախում էր դիմադրաւել հարիւր հազարաւոր կայսերական զօրքին։ Շրկար այլևս լեհ կանոնաւոր զօրքը, որ 1830-ին հզօր պատւար էր ազգային յեղափոխութեան։ Եւ ապստամբները ճակատ առ ճակատ չէին դուրս գալիս ռուսաց զօրքի դէմ։ Անհամար խմբերի բաժանւած՝ ցրւել էին նրանք ամբողջ երկրի մէջ, ձորերում, խիտ անտառներում, ուսկից կարելի էր դիւրութեամբ մաքառել... Պարտիզանական կռիւ էր դա, սպանիչ, յարատև, որ կատարեալ յուսահատութեան էր բերում ռուսներին։ Մի քանի ամիս շարունակ պաշտօնական կառավարութեան կողքին կանգուն էր Վարշավայում գաղտնի յեղափոխական Ատեան, որը իր աներևոյթ դարանից հրահանգներ էր արձակում լեհ ժողովրդին, փակում էր թատրոններ, եկեղեցիներ, մահւան էր դատապարտում դաւաճաններին։ Պետերբուրգը անզօր կատաղութեան մէջ շանթեր էր թափում և անդադար ստւարացնում էր զօրքը Վարշավայում. նրա թիւը հասաւ 200,000-ի։ Ո՞րպիսի հոյակապ մենամարտութիւն... Բայց նա անվերջ չէր և վաղ թէ ուշ Լեհաստանը պիտի խոնարհւէր։ —

Մի անգամ ևս յուսացին լեհերը, թէ իրենց դատը արձագանք կը գտնէր պաշտօնական Եւրոպայում։ Սար ու ձոր ընկած՝ լեհ ասպատակները ձգձգում էին դիտմամբ պարտիզանական կռիւը, մինչև որ դրսից օգնութիւն կը հասնէր։ Ոչ ոք չեկաւ. լեհերը յուսախաբ՝ անձնատուր եղան և „խաղաղութիւնը“... արեան հեղեղների գնով վերահաստատւեց նրանց հայրենիքում...

Լեհաստանը յանձնւեց իր պատմական դահիճ Մուրավիովին, որը վագրի անյագութեամբ ամիսների ընթացքում խմեց ապստամբների արիւնը։ Կախաղանները ցցւեցին ամէն տեղ և յեղափոխական կոմիտէների անդամները խեղդոտւեցին հրապարակաւ։ Միւսները շղթայակապ խմբերով քշւեցին այնտեղ, ուսկից այլևս չեն վերադառնում... Սարսափելի է լեհական մարտիրոսութեան այդ երկրորդ շրջանը, որը լեհերին ամենայն իրաւամբ առաջին շարքն է դասում ազատութեան համար մարտնչող ազգերի սուրբ Պանթէոնում։ Մուրավիով որոշել էր այնպիսի սարսափ ձգել լեհ ազգի վրայ, որ սա յաւիտեանս հրաժարւէր իր անկախութեան ցնորքներից։ Հասա՞ւ նա արդեօք իր նպատակին— ապագան ցոյց կը տայ։ Բայց Լեհաստանը դարձաւ այնուհետև անլուր բարբարոսութիւնների մի թատերաբեմ։ Ճնշեցին նրան տնտեսապէս, բռնացան նրա ազգային հարստութիւնների, նրա լեզուի, սովորութիւնների և նոյնիսկ կրօնի վրայ։ Ցափշտակեցին, յարքունիս գրաւեցին ազնւականութեան ու կաթոլիկ կղերի բազմաթիւ կալւածները կամ թէ ծանրաբեռնեցին նրանց անօրինակ հարկերով — այդ երկու դասակարգերը ամենավտանգաւորն էին դիտւում, նրանք համակիր էին յեղափոխական շարժման։ Ռուսաց լեզուն դարձաւ տիրապետող դպրոցների ու վարչական հաստատութիւնների մէջ, նա եղաւ պարտադիր անգամ կաթոլիկ եկեղեցու մէջ։ Փակւեցին լեհական տպարաններն ու գրավաճառանոցները, փակւեցին հարիւրաւոր վանքերը և կաթոլիկ հոգևոր վարչութիւնը Վարշավայից փոխադրւեց Պետերբուրգ։

—

Անցան այնուհետև 38 ձիգ տարիներ... Եւ ի՞նչ ենք տեսնում։ Լեհ ազգութիւնը փոխանակ կուլ գնալու, այսօր թերևս աւելի ուժեղ է, քան երբ և իցէ։ Այնքան ուժեղ է նա իր մտաւոր ու բարոյական մեծութեամբ, իր լեզուի ու հայրենիքի սիրով, որ Պետերբուրգը՝ բէզարած իր դրակօնական ճնշումներից, յուսահատւած՝ լեհերին ռուսացնելու ապարդիւն փորձերից՝ այսօր մերձենալ է ուզում Լեհաստանին, հաշտւել է ուզում նրա հետ, և արդէն զիջումներ է անում։ Եւ այդ այն ժամանակ, երբ նա խեղդում է Ֆինլանդիային, խեղդում է հայերին ու իր հարազատ ռուս ժողովրդին։ Այնքան ուժեղ է նա (Լեհաստանը) իբրև ուրոյն, կուլտուրական ազգ, որ Եւրոպայի ամենահզօր „կոսմոպոլիտ“ կուսակցութիւնն անգամ՝ Միջազգային Սոցիալ-դեմոկրատիան իր ամենաականաւոր ներկայացուցիչների բերանով Լեհաստանի անկախութիւնն է հռչակում, առանց որի „չէք ազատութիւն Ռուսաստանում“։ Այնքան ուժեղ է նա իբրև դիմադրող-յեղափոխական տարր ռուս կայսրութեան մէջ, որ ռուսական ամէն կարգի յեղափոխականներ՝ ընկերավարութիւն դաւանելով հանդերձ՝ ստիպւած են ընդունել Լեհաստանի անկախութիւնը իբրև անպայման սկզբունք—որովհետև ամէն անգամ, երբ լեհ և ռուս յեղափոխականների „միութեան“ խնդիր է հրապարակ գալիս՝ Լեհաստանի ամենահզօր մարտական կուսակցութիւնը (սոցիալ-պարիտոնները, որոնք ջերմ սոցիալիստներ են, բայց և ջերմ հայրենասէրներ միաժամանակ) դնում է այդ անկախութիւնը իբրև անպայմանապահանջ...

* *

Դառնանք այժմ Սոցիալական Շարժման և տեսնենք, ինչ էր նրա ընդհանուր կերպարանքը 50-ական ու 60-ական թւերին, այն ժամանակ, երբ քաղաքական կամ ազգային-ազատագրական շարժումները ալեկոծում էին լուսաւոր աշխարհը։ 1847-ին Կարլ Մարքսի արձակած կոչը՝ համաշխարհային պրոլետարիատին մնաց առժամանակ „Ձայն բառբառոյ յանապատի“։ Ո՞րտեղից լսւէր արձագանք։ Ֆրանսիայում Ցունիսեան սարսափելի ջարդերից յետոյ՝ պրոլետարիատը վիրաւոր, շնչասպառ՝ այլևս ընդունակ չէր ուժգին թափերի։ Իսկ գերմանական աշխարհում պրոլետարական կազմակերպւած շարժման հետքն անգամ չկար։ Անգլիայի բանւորներն էլ կլանւած էին իրենց Տրէդ-Յունիոններով, տնտեսական-գործնական շարժումներով, հեռու սոցիալիզմից և իդէալական բարձր թռիչքներից։ Կարլ Մարքսի կոչը այնուամենայնիւ ապարդիւն չանցաւ և 15 տարուց յետոյ տւեց իր պտուղները։

Տասնուհինգ տարւայ մէջ մեծ փոփոխութիւններ եղան տնտեսական աշխարհում։ Կապիտալիզմը հզօր թափերով առաջ գնաց Անգլիայում և այնտեղից անցաւ

դէպի Գերմանիա, ուր 1848-ի յեղափոխութիւնը ոչընչացրել էր ֆէօդալական կարգերը և հարթել ճանապարհը խոշոր ինդուստրիայի ազատ ու բնականոն զարգացման համար։ Ազատ առևտուր ու արդիւնագործութիւն՝ առանց հովանաւորող մաքսերի և ուրիշ բազմատեսակ կաշկանդումների — այդ էր նպատակը. բազմաթիւ առևտրական դաշինքների, որոնք կապուեցին այդ միջոցներում քաղաքակրթուած այլևայլ երկրների մէջ, այդ բոլորը նպաստեց տնտեսական կեանքի միացման ամբողջ Եւրոպայում։

Նման պայմանները արտադրեցին նման չարիքներ։ Աշխատաւոր դասակարգերը բոլոր երկրներում ճնշուած, իրաւազուրկ՝ զգացին շուտով, որ նրանց բոլորի վրայ միևնոյն կապիտալիզմի լուծն է ծանրանում, որ նրանք բոլորն էլ եղբայրակիցներ են դառն ճակատագրի և բնազդօրէն իրար մերձենալու փորձեր արեցին։ Իսկ պրոլետարիատի հասուն խաւերը տարտամ կերպով սկսեցին երազել բոլոր ճնշուածների վերջնական ազատումը և ընդնշմարեցին ապագայի մառախուղների մէջ մի նոր սոցիալական կազմակերպութիւն, ուր չեն լինի դասակարգեր, չեն լինի իշխողներ ու հպատակներ, ուր աշխատանքը, քաղաքակրթութիւնը և նիւթական վայելքները հաւասարապէս բաժին կը լինեն իւրաքանչիւրին. . .

Պատմական մի հանդիսաւոր մոմէնտ էր դա, երբ Եւրոպայի կապիտալիստական երկրներից մինչև Ատլանտեան ովկիանի միւս եզերքը ազատարար հողմի պէս փչեց պրոլետարական յուսահատ կոչը՝ „Եղբայր ենք մենք, յենւենք մեր ուժերի վրայ, փրկենք մենք ինքներս մեզ“։

Միութեան այդ կոչը, որ առաջին պատասխանն էր 1847-ի Մարքսեան հրովարտակի՝ մարմնացաւ հռչակաւոր Ինտերնացիոնալի կամ Միջազգային Բանւորական Դաշնակցութեան մէջ։ 1862-ին Ֆրանսիացի բանւորների մի խումբ Լօնդօնի համաշխարհային ցուցահանդէսում տեսակցութիւն ունեցաւ անգլիական Տրէդ-իւնիօնիստների հետ և փոխադարձ համաձայնութեամբ որոշեցին հիմնել միջազգային մի դաշնակցութիւն, որը կարողանար սերտ կապ հաստատել բոլոր երկրների պրոլետարների մէջ։ 1864-ին երկու խորհրդակցող կողմերը նորից գումարուեցին մի մեծ միթինգում, որ կազմակերպուած էր յօգուտ լեհերի։ Ներկայ էին այստեղ բանւորական պատգամաւորներ նաև Շվեյցարիայից, Բելգիայից ու Գերմանիայից։ Արտասանուեցին սրտառուչ ճառեր, բուռն համակրանք ու կեցցէներ յղուեցին ռուսաց բռնապետութեան քաջարի զոհերին։ Մէկը հռետորներից շեշտեց հետևեալը.

„Լեհերը տանջւում են — այո։ Բայց կայ աշխարհիս չորս կողմը ցրուած մի մեծ ազգութիւն, աւելի ևս հարբստահարուած — պրոլետարիատն է դա։ Թող այս ժողովից դուրս թռչէ ազատութեան առաջին ճիչը և թող նա շառաչէ ամէն տեղ, ուր մարդիկ մեռնում են յոգնութիւնից ու զրկանքներից, ուր նրանք որոճում են տգիտութեան ու թշւառութեան մէջ, ուր ֆիզիքական ուժերը հաշմանդամ են լինում և մտաւոր կարողութիւնները խեղդւում, ուր հեծկլտում են մարդկային մասսաները և արդարութիւն են աղաղակում“. . .

Եւ 1864-ին խարիսխը դրուեց Միջազգային Բանւորական Դաշնակցութեան։ Որքա՜ն այլատարբ էր նրա կազմը սկզբում։ Այդտեղ ներկայ էին ամէն տեսակի „կուռողներ“՝ պօզիտիւիստ փիլիսոփաներից սկսած մինչև ամենակարմիր յեղափոխականները։ Այդտեղ կային և չափաւոր հանրապետականներ և ընկերվարականներ պէս-պէս գոյներով — պրուդօնիստներ, բլանկիստներ, ֆուրիէրիստներ, լասսալեաններ *), մարքսիստներ և այլն։ Այդտեղ ներկայ էին անձամբ XIX դարի երկու հռչակաւոր դաւադիրները — Մաձինի և Բլանկի։

Կարլ Մարքս կոչուած էր վճռական դեր խաղալու „Ինտերնացիոնալի“ հիմնադրութեան մէջ։ Նա ինքը խմբագրեց նրա „բացման ուղերձը“ inauguraladresse և հիմնական սկզբունքները։ Նա կարողացաւ իր դիպլոմատական տաղանդի շնորհիւ գոհացում տալ սկզբում այլագաւան տարրերին և ապա կամաց-կամաց զտեց Դաշնակցութիւնը այդ աւելորդ տարրերից։

Միջազգային այդ դաշնակցութեան հիմնական սկզբունքներն էին. 1) Զանազան երկրներից պրոլետարիատի ներկայացուցիչները համախմբւում են՝ գործելու յանուն աշխատաւոր դասակարգի յառաջադիմութեան և նրա վերջնական ազատագրութեան. 2) Բանւորական ազատագրութիւնը պէտք է լինի նոյն իրենց բանւորների գործը։

Ինտերնացիոնալը Կարլ Մարքսի համար եղաւ մի ամբիոն, ուսկից նա քարոզում էր ութ տարի շարունակ „համայն աշխարհի պրոլետարիատին“։ Յաջորդ կոնգրէսներում նա հետզհետէ դուրս մղեց իրեն հակառակ բոլոր հոսանքները և իբրև տիրապետող հոսանք Ինտերնացիոնալում՝ դարձրեց մարքսիզմը։ Առանց ցնցումների չկատարուեց զտման այդ պրոցէսը։ Կատաղի հալածանքներ, փոթորկոտ պայքարներ տեղի ունեցան Դաշնակցութեան գրկում — պայքարներ, որոնց ըստ արժանւոյն գնահատութիւնը սպասում է դեռ անաչառ պատմութեան դատաստանին։ Տարիների յամառ պայքարից — ընդդէմ, գլխաւորապէս, ռուս անիշխանական Բակունինի — Կարլ Մարքս դուրս եկաւ յաղթանակով և անցկացրեց իր վարդապետութիւնը, որ և այսօր տիրապետում է միջազգային ընկերվարական շարժման մէջ։

Ամէն տարի կանոնաւորապէս գումարւում էին Ինտերնացիոնալի համաժողովները շվեյցարական ազատ հողի վրայ՝ հաստատապնդելու Մարքսից ներշնչուած ընկերվարական սկզբունքները. հռչակում էին դասակարգային կռիւ և „համաշխարհային սոցիալական հանրապետութիւն“, դատապարտում էին պատերազմները և ֆէօդալական-բուրժուազական բռնակալութիւնը, պահանջում էին ժողովրդային գերիշխանութիւն, անհատի ազատութիւն և ազատութիւն խօսքի, մամուլի, գումարումների, խղճի և աշխատանքի։

Իր անհամար ճիւղաւորութիւններով Ինտերնացիոնալը ցանցի պէս պատել էր ամբողջ արևմտեան Եւրոպան։ Նա ունէր հազարաւոր կողմնակիցներ նաև հիւսիսային Ամերիկայում և Ռուսաստանում։ 1868-ին նրա անդամների թիւը հասնում էր շուրջ երկու միլիոնի։ Մէկ միլիոն միայն Ֆրանսիան էր տալիս։

Այդ ահարկու դաշնակցութիւնը, չնայած ներքին սուր երկպառակութիւններին, չնայած Մարքսի ու Բակունինի կատաղի ըմբշամարտին, — որը և եղաւ Ինտերնացիո-

*) Ճիշտ նոյն միջոցներում աշխարհահռչակ Ֆերդինանդ Լասսալ իր աննման ագիտատորական հանճարով ստեղծել էր արդէն Գերմանիայի մէջ „համագերմանական բանւորական միութիւնը“ մի քանի հազար բանւոր-անդամներով։

նալի անկման խոշոր պատճառներից մինը — այնուամենայնիւ մեծ երկիւղ էր ներշնչում իշխող դասակարգերին։ Իր հիմնադրութեան օրից սկսած Դաշնակցութիւնը նիւթապէս ու բարոյապէս խրախուսում էր բանւորական գ ո ր ծ ա դ ո ւ լ ն ե ր ը, որոնց թիւը անսովոր կերպով աճեց 1864-1870։ Եւ ամէն մի գործադուլի աջող կամ անաջող ելքը մղում էր բոլոր երկրներից տասնեակ հազարաւոր պրօլետարներ դէպի Դաշնակցութեան գիրկը։ Միմիայն այդ փաստը բաւական էր արդէն, որ Դաշնակցութեան թշնամիները դիմէին հալածանքների։ Իսկ երբ Կարլ Մարքս՝ Ինտերնացիօնալի պարագլուխը ջերմ համակրանք յայտնեց Պարիզի „Կօմունային" *), երբ յայտնի եղաւ Ինտերնացիօնալի մասնակցութիւնը այդ հսկայական դրամայի մէջ, այն ժամանակ հալածանքները կրկնապատկեցին և կարճ միջոցում Պարիզի հզօր ճիւղը, որ աջ թեւն էր Ինտերնացիօնալի՝ կազմալուծուեց ու ոչնչացաւ։ Ռօմանական ուրիշ երկրներում ևս, Իտալիայում ու Սպանիայում ռէակցիայի ճնշումները մի կողմից, Բակունիստների դիմադրութիւնը միւս կողմից՝ թուլացրին հետզհետէ Դաշնակցութեան կազմակերպութիւնները։ Այնուհետև դեռ երկու տարի ևս Ինտերնացիօնալը քարշ տուեց իր գոյութիւնը. 1872-ին գոցեց նա իր շրջանը 8-9 տարուայ եռուն գործունէութիւնից յետոյ...

Մեռաւ, որ 17 տարուց յետոյ յարութիւն առնէ աւելի հզօր ու գիտակից, աւելի ամրապնդուած ու սրբագործուած իրականութեան պահանջներով։ Որքան և վաղանցուկ ու պակասաւոր լինի Մ ի ջ ա զ գ ա յ ն ո ւ թ ե ա ն այդ անդրանիկ փորձը, — նա մի յիշատակելի անցք էր, որ նոր ու փառաւոր էջ էր բաց անում սօցիալական շարժման դարաւոր պատմութեան մէջ։ Շարժումը գնաց այնուհետև Մարքսի գծած ուղղութեամբ, միշտ աւելի և աւելի տոգորուեց նրա սկզբունքներով և ժամանակի ընթացքում իր գիրկը գրաւեց հին և նոր աշխարհի միլիօնաւոր պրօլետարիատի լէգիօնները։

ԹԻՒՐՔԻՈՅ ՇՈՒՐՋԸ

ՄԱԿԵԴՈՆԻԱ. — Գարունը կուգայ ծիծաղուն, բնութիւնը կը կանչւորի, ծառերը ծաղկէ պսակներ կը հիւսեն իրենց ճակտին, թռչունները իրենց սէրերը կը դայլայլեն, ու ստրուկ ազգերը իրենց ազատութեան երգը կ'երգեն։ Բնութեան յաւիտենական վերածնութեան հետ, մարդկային վերածնութեան գաղափարն ալ ծնունդ կ'առնէ։

Ձմեռ չանցնիր որ սա լուրը չի տարածուի՝ „Մ օ տ ա կ ա յ գ ա ր ն ա ն Մակեդոնիոյ մէջ ապստամբութիւն պիտի պայթի"։ Ամէն տարիէ աւելի այս տարի Մակեդոնիոյ հարցը սուր եւ մտատանջող գոյն մը առաւ, որ, ինչպէս Հայաստանը, քառորդ դարէ իվեր կըսպասէ Պերլինի դաշնադրութեան բարենորոգումներու յօդուածին իրագործման։

Մակեդոնական բարձր կօմիտէն, որուն կեդրոնը Սօֆիա է, եւ պուլկար ժողովրդին միահամուռ սէրն ու համակրանքը — զուգէ պուլկար կառավարութեան բարեացակամութիւնն եւս — կը վայելէ, այս տարի անսովոր եռանդով գործեց ու աղմկեց, որուն ուժ տուաւ մասնաւորապէս Համիդի աղտոտ բռնակալութիւնը։ Համիդ հոս եւս սկսաւ գործ դնել ան արիւնային քաղաքականութիւնը, որ իր երկրին հիմնական եւ պահապան օրէնքը ըրած է. հալածել, սպաննել, բանտարկել, եղբայրասպան թշնամութիւններ սերմանել։ Այդ մարդը գահը նստած օրէն իվեր կը ջարդէ ու կը քանդէ անզուսպ նախանձախնդրութիւնով մը, որուն վրայ ամբողջ մարդկութիւնը ապուշ սարսափով եւ զայրոյթով մը կը նայի եւ սակայն տեղէն չի շարժիր։

Մակեդոնիա ընկած է այլեւս. հոն ամէն օր ձերբակալութիւն, վայրենի հալածանք, հայդուկային կռիւներ, ահաբեկութիւն, դաւաճանութիւններ, ահաւոր ճգնաժամ մը կը մատնանիշեն եւ հեւքոտինքի մէջ կը պահեն Աստուծոյ պատուհաս խալիֆաները, որոնք երկիր մը վարելու տակէն գլխէն չի հասկնալով, եաթաղանի օսմանեան օրէնքը կը բանեցնեն։ Ընդհանուր կամ մասնակի ջարդ, ահա թէ ինչ բանէ կը հասկնան սա գ ա հ ր ա մ ա ն թիւրքերը։

Սելանիկի մէջ ձերբակալուածներու դատավարութիւնը անճոռնի կատակերգութիւն մըն էր. նոյն անհոգ եւ անգիտակից հարցաքննութեան եղանակը, ինչ որ էր հայ յեղափոխականներու դատավարութեան ատեն։ „Քանի մը սրիկաներ, չարագործներ, աւազակներ են"։ Ափ մը նախատալից բառեր, որոնք հերիք կըլլան համոզել արիւնարբու սուլթանները որպէսզի սիրտերնին լայն պահեն եւ կռնակներուն վրայ վարդէ անկողիններու մէջ մեղկօրէն մրափեն։

Այո՛, այսպէս են բոլոր անպիտան բռնակալները, ոչինչ կը սորվին եւ ոչինչ կը մոռնան։

Մակեդոնիան բուն յեղափոխութեան փազին մէջ կը մտնէր, իր ապստամբական գործունէութիւնը ու ճիգերը բազմապատկելով։ Մակեդոնիոյ դժբախտ ժողովուրդը խորապէս զգացած ու համոզուած էր որ իր փրկութիւնը այլեւս զէնքի, ուժանակի մէջն էր. ան կը կերակրէր ու կը խնամէր իր բարօրութեան համար անձնուէր հայդուկները, բերան չէր տար զանոնք, հակառակ իրեն համար ստեղծուած սարսափելի ու դժոխային դրութեան. մինչեւ ցարդ ձերբակալուած յեղափոխականները կամքի եւ համոզմունքի այնպիսի ազնիւ եւ գաղափարական կուռքի մը ապացոյցը տուին, որ պատիւ կը բերէ այն ժողովուրդին, որ այս րոպէիս գոյութեան գերագոյն մեծ մարտը կը մղէ։ Այն ազգը, որ սուրբ դատի մը համար տառապանքի ու զոհաբերող փիլիսոփայութեան ամուր բնազդը ունի, չի մեռնիր։

Մէկ դիէն սուլթան Համիդի անգութ եւ յետադէմ ըէժիմը, միւս դիէն ժողովուրդին սարսափելի եւ անտանելի դրութիւնը, ուժ ու թեւ տուին Մակեդոնիոյ յեղափոխական կօմիտէին, այնպէս որ վայրկեան մը դիւանագիտական աշխարհը յանկարծակիի եկաւ եւ վախնալով միջազգային բարդութիւններէ, ճնշում բանեցուց թէ սուլթանին, որ խիստ միջոցներ ձեռք առնէ Մակեդոնիոյ մէջ կարգը պահպանելու համար եւ թէ Պուլկարիոյ, որպէսզի մօտէն եւ լրջօրէն հսկէ մակեդոնական կօմիտէի վրա եւ զայն տեղը ծանր նստեցնէ։ Ռուսիա մանաւանդ այս գործին մէջ սովորականէն աւելի փութկոտութիւն ցոյց տուաւ սուլթանին սիրտ տալու, որ, Լօպանօվի լեզուով, „ամէն կերպով" խեղդէ մակեդոնական շարժումը։ Ռուսիա, ձեռքը կրակը Արեւելքի մէջ, անժամանակ կը սեպէր այդ շարժումը պէտք եղածին պէս իր քաղաքական տեսակէտներուն ծառայեցնելու համար, միայն գոհացաւ Դամոկլէսի սուր մ'ընել այդ հարցը սուլթան Համիդի քէլէշ գլխուն վրայ։

1896-ի Ռուսիոյ համաձայնութեան մը համեմատ, որով կը վճռէին ի ր ա ց վ ի ճ ա կ ը անփոփոխ պահել Պալքաններու մէջ, Աւստրիա եւս, թէեւ նոյնքան հիւանդ որքան Թիւրքիա, ձեռքերով ոտքերով հակառակ է Մակեդոնիոյ շարժման. ան ունի հեռաւոր կամ ճիշդը մօտաւոր դիտումներ՝ դէպի Սելանիկ առաջանալու. Եգեան ծովու ծաւի ալիքները կը քաշեն զինքը։ Իսկ Գերմանիան, որ կը հովանաւորէ իր մեծ բարեկամը, հաւատացեալներու հրամանատարը, եւ միշտ անոր ոճրային հակումները կը փայփայէ, ա ֆ է ր ի մ ըսելով, Աւստրիոյ ձգտումներուն առջեւ լռութեան դաւաճանութիւնը կը սնուցանէ, քաջ գիտնալով որ Հապսպուրկներու կայսրութիւնը օր մը չէ օր մը գերմաններու ժառանգ պիտի իյնայ։

Պալքանեան երկիրները ոչ միայն արտաքին քաղաքականութեան խաղալիկներ են, այլեւ ներքին խառնաշփոթ ու ոսոխ դրութիւն մը կը ներկայացնեն։ Յոյներ, սերպեր, ալպանացիներ, պուլկարներ, իրարու հակամարտ տարրեր, համերաշխութեան համաձայնակէտ մը չեն կրնար գտնել...

Յոյները մանաւանդ իրենց ձեռնտու չեն համարիր Մակեդոնիոյ շարժումը, որ ինպաստ Պուլկարիոյ է. համհելլենական „Մեծ Յունաստանի" մը երազին քով չեն հանդուրժեր „Մեծ Պուլկարիոյ" ստեղծումին։ Հետեւապէս ամէն ճիգ կը փորձեն դերեւելու համար Ալեքսանդրի ու մեծ փիլիսոփաներու հայրենիքին մէջ ոեւէ օտար ոտնձգութիւն. նոյնիսկ մոռնալով թիւրքերէն կերած ծեծը, ամէն աջակցութիւն կը նուիրեն — ապագայի հաշուով անշուշտ — Համիդի պետութեան, Մակեդոնիոյ շարժումը խեղդել ու վիժել տալու համար. այնպէս որ այդ ոսոխութիւնը տեսակ մը եղբայրասպանութեան ձեւ առած է։

Դժբախտութիւն մըն է Պալքանեան խաղաղութեան համար, փոքրիկ ազգերուն մեծ փառասիրութիւնները, որոնք կարող էին հազիւ

1) որի մասին կը խօսենք առաջիկայ յօդուածում։

Պալքանեան դաշնակցութեան մը գաղափարին առջեւ, եթէ այդ ազգերը իրենց բուն շահերը անաչառօրէն ըմբռնէին ընդհանուրի թշնամիին դէմ եւ նոյնիսկ ապագայ շահերու տեսակէտով: Յոյները իրենց քաղաքական գոյութենէն իվեր չեն ցոյց տուած դեռ դիւանագիտական աննախապաշար պայծառատեսութիւն, եւ չեն գտած դեռ „միջին ճամբան", զոր Արիստոտէլի հանճարը գծած էր մարդկութեան համար: Հպարտ իրենց անցեալով, դեռ միամիտ արհամարհանք մը ունին օտարախօս կամ „բարբարոս" ազգերուն դէմ եւ կը կարծեն որ Ոլիմպոսի բարձունքին վրայ դեռ Աստուածները գոյութիւն ունին եւ „ամպրոպային" Արամազդը կարող է շանթեր տեղալ Թիւրք բանակին գլխուն: Ոլիմպոսը, ուր աստուածները եւ աստուածուհիները կը սիրքանէին, պարպուած է: Ապոլոնի աղջիկները այլեւս չեն ներշնչեր նոր Յունաստանին այն աւիւնը եւ իմաստութիւնը, որով հին Հելլադան կը պարծենար:

Յունաստանի հին յաւիտենական իմաստութենէն բոլոր ազգերը օգտեցան, բացի, գուցէ, յոյներէն, որոնց մէջ չենք նշմարեր դեռ ոեւէ գաղափարական շարժում. իրենց պապերուն շքովը կը շքաւորւին:

Ալպանիան, ապագայ մեծ պիծակի բոյնը պիտի ըլլայ օսմանեան պետութեան գլխուն: Հոն մեծ ոգեւորութիւն կայ անկախութեան, բայց Համիդ առայժմ կը գործածէ այդ քիթապսզները մակեդոնացիներուն դէմ եւ կըսպառնայ Մակեդոնիոյ մէջ քիւրդերուն դերը տալ անոնց:

Պուլկարիան թէեւ զինուորապէս լաւ դրութեան մէջ, հայրենասիրութիւնը աւելի անկեղծ եւ խանդավառ, բայց արդի պարագաներուն չի կրնար արդիւնապէս ձեռք տալ Մակեդոնիոյ, եթէ զօրաւոր աջ մը իրեն թեւ չըլլայ: Պուլկարիա քիչ ժամանակի մէջ այդքան յառաջադիմելով, հարեւաններուն նախանձը գրգռեց իր դէմ:

Պետութեանց սպառնալիքին եւ Եըլըզի ինքնախաբ յանդիմանութեան վրայ — զի Համիդ կը սիրէ իր հարկատու իշխանապետութեան հրամայական ծանուցագրեր ղրկել երբեմն — պուլկար կառավարութիւնը Մակեդոնիոյ բարձրագոյն կոմիտէի անդամները բանտարկեց, որով ինքզինքը խարխափ եւ փափուկ կացութեան մէջ դրաւ իր ժողովրդին հանդէպ, որ բուռն կերպով բողոքեց Քարավէլովի նախարարութեան այդ ապօրինի եւ հակազգային պետական հարուածին դէմ: Չնայելով այդ օրէնքի բռնաբարութեան, Մակեդոնիոյ գործունէութեան զսպանակը չի թուլցաւ, մեծ միթինկ մը, որ տեղի ունեցաւ Զատկի օրը Սոֆիայի մէջ, ապացուցեց որ ոչ միայն պուլկար ժողովուրդը՝ այլեւ զինուորականութիւնը սրտանց համակիր է Մակեդոնական դատին: Այդ օրը նոր բարձրագոյն կոմիտէ ընտրուեցաւ, որով մակեդոնական շարժումը առանց բոպէ մը ընդհատելու կը գտնէ իր գլուխը ազգային ազատագրութեան մոլեգին պայքարը մղելու համար: Պետութիւնը հուն չկրցաւ ըլլալ ազգային զգացումին հետ. նոր կոմիտէն գործի գլուխ կանցնի բարոյապէս աւելի ուժովցած եւ աւելի դրական ծրագրով, անմիջական պահանջ դնելով խոստացուած բարենորոգումներու գործադրութիւնը, որուն կը ծայնակցի Պուլկարիա եւ որուն Ռուսիոյ դեսպանն ալ ուժ կուտայ կըսեն:

Թիւրքիան զօրքերու շղթայով մը կամրցնէ պուլկար սահմանագլուխը որպէսզի հայդուկային խումբեր չանցնին Մակեդոնիոյ մէջ „շնորհիւ վեհափառ սուլթանին" տիրող ապահովութիւնը եւ անդորրութիւնը խանգարելու համար: Թիւրքիոյ — յաւիտենական թէնպէլհանէն — իրենց ստեղծած ծառով — մորճէն չի կաթիր բնաւ խոհեմ քաղաքականութիւն մը բանեցնելու փրկաւէտ եւ ճշմարտապէս մարդկային գաղափարը. իր հին բարի սովորութեան համեմատ, կը մտաբերէ Մակեդոնիան մոխիր ու աւեր ընել, օսմանեան պատմութեան սեւ ու տխուր էջերուն վրայ նոր էջ մըն ալ աւելցնելու համար. եւ այն սրիկան, որ օսմանեան անարժան գահը կը մտոտէ, վեհապետի չվայել լեզուով կըսպառնայ բնաջինջ ընել մակեդոնացիները: Ամիսներ առաջ պուլկար էկզարքին, քիւլանպէյիի մը պէս կըսէր. „աչքերնիդ բացէք, աչքերնիդ կը բանամ, հա"... Բիւզանդիոնի Վասիլ Բ. պուլկարասպան կայսրն ալ գերազանցեց այդ էտէպսիզ փատիշահը:

Եւ այդ „փինթի համիդի" վրայ է, ինչպէս կը կոչէր սուլթան Ազիզ, որ կը զուրգուրան Կիյօմի պէս այլասեռածներ ու ցարի սինիք կառավարութեան պէս քրիստոնեայ պետութիւններ:

Ո՞վ տեսաւ արդեօք ռուս կառավարութեան արեւելեան քրիստոնեաներու սիրագործ պաշտպանութիւնը. տեղն է ըսել, Աստուած պահպանէ մեզ մեր բարեկամներէն, թշնամիներնուն հոգը մեզի ձգէ: Եթէ սրբազան Ռուսիան, Բօբօտօնօսցէվի հաւատաքննութեան օրով, Լօբանով մը ունեցաւ հայերը ջարդել տալու համար, ո՞վ գիտէ թէ դժբախտ Մակեդոնիան ալ համասլաւութեան շղթան վիզը չանցնելուն համար, նոր Լօպանով մը չպիտի ունենայ: Պուլկարիոյ սարսափներու ատեն Կօրշաքօվ, իր միջամտութիւնը արդարացնելու համար կըմէր. ռուս ժողովրդին մէջ „շարժումը անդիմադրելի է" եւ թէ կայսերական կառավարութիւնը ստիպուած էր բանալ „ապահովութեան կափարիչը": Պուլկարիան փրկազատեցաւ ու ապերախտ եղաւ Մօսկօֆ պետութեան. այդ օրէն ցարի բարեսիրտ կառավարութիւնը ակռաները առած ամուլ բարերարութիւններէ, չուզեց Կովկասի սահմաններուն վրայ ապերախտ Հայաստան մը եւս ստեղծել... Երբ պէտք զգայ, սակայն, ապերախտներուն դասխրատ մը ըլլալու համար, սուլթան Համիդին խանչէրը կը սրէ եւ երբեմն օրթօդոքս եկեղեցիէն համհոտ մը տալու համար, բանտարկեալներու, մահապարտներու բարձր ներումը կը խլէ զոեհիկ մարդասպանէն:

Ճերմակ ցարը երբ մարդասիրական այնքան անդիմադրելի ապացոյցներ կուտայ քրիստոնեայ աշխարհին, Մակեդոնիոյ հարաւային ծայրը, Էգեան ծովու ալիքներուն մէջ բոյն դրած Այնօրօզի վանքին կամ զօրանոցին աբեղաները, ծոյլ եւ զերեզմանային հանգստականութեան մէջ, օրն իբուն իրենց չիլ աչքերը պիշպիշ յառած քթերնուն ու պորտերնուն վրայ աստուածային լոյսը կը տենչան անպարտելի ցարերու մեծ փառքին համար: Պօժէ ցարիա...

Բարեսիրտ պետութիւններու բոլոր ջանքերուն հակառակ, Համիդի պետութիւնը կը թափթփի աղբ եղած շէնքի մը պէս. ոչ ազնիւ սիրտ մը եւ ոչ կորովի ձեռք մը խիզախութիւն ունի այդ անխուսափելի քայքայումին դարման տանելու համար: Թիւրքիոյ անկումը պիտի չըլլայ այն դիւցազնական անկումը, որ ցոյց կուտան առհասարակ հոգեւարք ազգերը, իրենց հետ տանելով յաճախ, ընդհանուր մարդկութեան արցունքը: Անուղղայ ոճրագործի մը մահը պիտի ըլլայ ան. „Նինուէն կործանեցաւ, կըսէ Նաւում մարգարէն, ո՞վ պիտի մեղքնայ անոր վրայ":

Ո՞վ պիտի խղճայ չարագործ, անքան պետութեան վրայ որուն փատգլխութիւնը ամէն լաւ բանի դէմ եւ անամօթութիւնը՝ առած եղած է դիւանագիտական աշխարհին մէջ: Դարու մը գոյութեան պատմական սինէմաթօկրաֆին մէջէն, Թիւրքիան իր Ֆէսփիւսկիւլը խաղցնելով կանցնի, ձեռքը արիւնոտ կառափ մը բռնած եւ չար ժպիտ մը իր հաստ ու վաւաշոտ շրթունքներուն վրայ:

Խաւարի թագաւորութիւնը եղաւ ան. գուցէ հեռու չէ ան օրը, ուր Վիէննայի պարիսպներուն տակէն ետեւ գացող զեղծ, բարբարոս եւ աւազակային կառավարութիւնը քստոտ շան մը պէս Պալքաններէն ալ վռնտեն: Մեծ-Ծերունիին սրտին իղձը պիտի իրագործուի, երբ Եւրոպայի կուշտը խրած այդ բարբարոսութեան եաթաղանը անդառնալիօրէն դուրս նետեն գուցէ, աւա՛ղ, դէպի Փոքր Ասիա:

Միթէ՞ Ասիան սպանդանոց է...

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„ՊՐՕ ԱՐՄԷՆԻԱ"

(№ № 5, 6, 7, 8)

„Պրօ Արմէնիա"-ի այդ համարները պարունակում են երկրից ստացուած ընդարձակ ու հետաքրքրական տեղեկութիւնների հետ միասին նաև յօդուածներ, նամակներ ու խմբագրականներ Պիէռ Քիառի, Պրեսանսէի, Էդուարդ Բեռնշտայնի, Ժօռէսի, պարլամենտական գործիչ Շօվիէրի, Դէստուրնէլ դը Կօնստանի, հօլանդական պարլամենտի անդամ Վան Կօլի և ֆրանսիական ինստիտուտի անդամ Վիօլլէի:

Բերենք այդ յօդուածներից ուշադրութեան արժանի կտորները:

„Մեր պաշտօնակիցներին ու ընթերցողներին" վերնագրով ծանուցման մէջ խմբագրութիւնը իր շնորհակալութիւնը յայտնելով ֆրանսիական և արտասահմանեան մամուլին „Պրօ Արմէնիա"-ին ցոյց տուած լաւ ընդունելութեան համար, յայտնում է ի միջի այլոց հետևեալը.

„Մենք մեր ամենաջերմ շնորհակալութիւնը պիտի

յայտնենք նաև հարստահարուածների մամուլին և մասնաւորապէս հայ մամուլին։ Մեր բարեկամ հայերը՝ բաժանուած անձնաւորութեան կամ տակտիկայի խնդիրներում՝ բոլորն էլ համաձայն գտնեցան՝ խրախուսելու մեզ մեր ձեռնարկած գործի մէջ։ Ցանկապէս կը խնդրէինք հաղորդել մեզ ճշգրիտ տեղեկութիւններ։

Եւրոպայի, Ամերիկայի և Եգիպտոսի հայ խմբումներին, որոնք շնորհակալութեան ուղերձներ են ղրկել մեզ, յղում ենք միևնոյն շնորհակալութիւնները և միևնոյն կոչը։

Ահաւասիկ արդէն լսւում է մեր ձայնը քաղաքակիրթ աշխարհում։ Պէտք է, որ այս խաղաղ, նորմալ ժամանակամիջոցում իրողութիւնները կուտակւին և մերկացնելով հայերի վիճակը, ըմբոստացնեն վերջապէս հասարակական կարծիքը, որ այնքան դժուարութեամբ է յուզւում, և ստեղծեն բարոյական այնպիսի մի հզօր ուժ, որը կարողանար մղել ժողովրդների հրամանատարներին դէպի անհրաժեշտ ու անխուսափելի քայլը — ջնջել Աբդիւլ Համիդի անունը թագաւորների շարքից, եթէ կարեկցութեամբ չուզենան ջնջել ապրողների շարքից մի հիւանդ, որ բռնւած է մարդասպանութեան տենդով. և այդ անագան գործողութիւնից յետոյ ի կատար ածել Բերլինի դաշնագրի յօդւածները“։

*

Նոյն այդ համարում Ֆրանսիս դը Պրէսանսէ, անզուգական հրապարակախօսը, ընդարձակ մէկ յօդւածում մոլեգին ոճով խարազանում է ֆրանսիական կառավարութեան և ամբողջ Եւրոպայի նւաստացումը Մեծ Մարդասպանի առաջ։ „Անցան, ասում է նա, այն հերոսական ժամանակները, երբ մարդիկ նահատակւում էին գաղափարի համար, երբ մի ժողովրդի մարտիրոսութիւնը աւելի տեղ էր գրաւում քրիստոնեայ աշխարհի գիտակցութեան մէջ, քան բօրսայի արժողութիւնը կամ թէ միջազգային առևտրի ցուցակները“ !...

Եւ Պրեսանսէ կոչ է անում ոչ մարդասիրական զգացումներին, այլ քաղաքական ողջմտութեան։

„Քանի որ 1896-ի զոհերի արիւնը այսօր այլևս դէպի երկինք չի աղաղակում, քանի որ դիակները համր են և Արևմուտքի զգայնութիւնը մեռած, մենք կարող ենք — այժմից ազդարարելով մէկ նոր դիւաժողովի վտանգը, այժմից հրաւիրելով մարդկանց ուշադրութիւնը այն խուլ որոտումների վրայ, որոնք լսւում են դժբախտ Հայաստանի լեռներից ու ձորերից — արթնացնել Եւրոպայի քաղաքական ողջմտութիւնը և առաջ բերել ոևէ կանխարգել գործողութիւն։ Թող չսխալւին. Անատոլիայում պատրաստւում է սարսափելի մի անակնկալ։ Անիրաւութիւնը ճակատագրապէս առաջ է բերում ոճիրի կրկնութիւն։ Եւրոպան կարծեց ընդմիշտ հեռացնել իրենից Հայաստանի տաղտկացուցիչ ուրուականը. բայց հէնց այդ ազգի վերաբերմամբ եղած պարսաւելի անտարբերութիւնն է, որ այսօր աւելի քան երբևիցէ հերթական է դարձնում նրա դատը։ Երբ փաշաները՝ խրախուսւած պետութիւնների ցինիկ անտարբերութեամբ՝ նորից կը ձգեն այդ ժողովուրդը չարչարանքի անկողնի վրայ, պէտք է որ, անշուշտ, նրա հեծեծանքի արձագանքը հասնէ մեր մայրաքաղաքները։ Պէտք է որ մեր դիւանագէտները ընտրեն երկու ճանապարհներից մինը՝ կամ ձեռնպահութիւն, որ կրաւորական մեղսակցութիւն է, և կամ միջամտութիւն, որը չի կարող, առանց ծաղրի, ընդունել նախկին „համերգի“ ձևը։ Ռէալիստները, գործնական մարդիկ վեր կը թռչեն զգաստացած. կը շփշփեն իրենց աչքերը։ Նրանք կը տեսնեն թէ ինչպէս արեան հեղեղների մէջ կարմրում են իրենց ձեռնարկները։ Խիղճը փճացած լինելով, խելացի եսամոլութիւնը կը հասկացնէ նրանց և չափել կըտայ խենդութիւնը այն քաղաքականութեան, որը շարունակ ձգձգելով, աւելի և աւելի ծանրացնում է դրութիւնը, և որը զոհաբերելով մարդկայնութիւնը, զոհում է նաև խաղաղութեան շահերը“։

—

Դէստուրնէլ դը Կօնստան, ֆրանսիական կառավարութեան պատուիրակը Հաագի մնայուն իրաւարար ատեանի մէջ, ծանօթանալով „Պրօ Արմէնիա“-ի մէջ հրատարակւած Հայաստանի վերաբերեալ դօկումենտների հետ, ուղղել է խմբագրապետ Քիառին հետևեալ ծանրակշիռ և ուշագրաւ նամակը, որ թարգմանում ենք կրճատումներով։ Նշանակալից է այդ նամակը առաւել ևս այն պատճառով, որ նրա հեղինակը՝ համաձայն իր ստանձնած բարձր առաքելութեան՝ ստիպւած է խօսել աւելի չափաւոր տոնով, աւելի վերապահութեամբ։

Յարգելի պարոն,

„Ներեցէք ուշ պատասխանելուս։ Դուք լաւ գիտէք, անշուշտ, որ իմ համակրանքը չի կարող պակսիլ ձեզ այնքան վեհանձն ու անհրաժեշտ մի գործում, որին նւիրւել է դուք և ձեր բարեկամները։ Բայց ես ինձ շփոթւած ու նւաստացած եմ զգում այն հակասութեան առջև, որ կայ իմ համակրութեան — կենդանի ու շատ անկեղծ միանգամայն — և այն չնչին օգնութեան մէջ որ նա կարող է ձեզ բերել։

Իզուր եմ փնտռում ոևէ միջոց ձեզ օգնելու համար։ Ես էլ ձեզ պէս ստիպւած եմ բաւականանալ միայն տրտմառիթ և երբեմն նոյնիսկ յուսահատ բողոքներով։ Ես մինչև իսկ հարցնում եմ ինձ, արդեօք զուր ժամավաճառութիւն չէ՞ մեր կողմից՝ բողոքներ ուղղել եւրոպական կառավարութիւններին... Եւրոպան Գերմանիայի առաջնորդութեամբ վերակազմեց թիւրքական զօրքը. իր սեփական ձեռքով վառեց մահմեդական ֆանատիկոսութիւնը։ Ի՞նչպէս նրանից սպասել այսօր, որ փորձէ դարման անել այն չարիքներին, որոնց պատճառը իր թուլութիւնն ու մեղսակցութիւնն է։

Եւ սակայն, դուք իրաւունք ունիք չդադրել բողոքելուց, և ես էլ յանցաւոր կը լինեմ, եթէ յուսահատւեմ։ Ձեր անդադրում մերկացումների շնորհիւ, մենք չենք կարող այլևս մեր տգիտութեամբ արդարացնել մեր կոյր, բարբարոս անտարբերութիւնը։ Եւ ժողովրդային մասսաների մէջ կազմւում է կարծիք ի նպաստ զոհերի, հալածւածների։ Այդ կարծիքը տարածւում է, ուժ է վաստակում և ի վերջոյ պիտի տիրանայ ամենքին...

Շարունակեցէք ձեր պրօպագանդը, մատնեցէք մարդասպաններին ոչ թէ կառավարութիւններին, այլ ամբողջ մարդկութեան դատաստանին։ Մարդկութիւնը կը յուզւի վերջապէս, կառավարութիւնները կը հպատակւին

նրան և ոճրագործները կը դողան ոչ թէ խղճի խայթից, այլ մերձեցող պատժի երկիւղից...

Ցուսացէք իրերի այդ արդար վերադարձին. բայց մինչ այն, իմացէք գէթ, որ անապատի մէջ չէք քարոզում։ Ֆրանսիայի արտաքին գործոց ներկայ նախարարը, վստահ եմ, որ կարեկցութիւնից զուրկ չէ, իսկ մենք բազմաթիւ ենք Պատգամաւորական Ժողովում ու Սենատում, մենք որ առանց խտրութեան կուսակցութիւնների, ձեզ պէս աներկիւղ պիտի արտայայտենք մեր ցասումը"։

*

Վ ա ն Կ օ լ, Հոլլանդիայի յայտնի պարլամենտական գործիչ, գրում է „Պրօ Արմենիա"-ի խմբագրութեան.

Սիրելի քաղաքացիներ,

„Իմ աջակցութիւնն էք խնդրում այն ազնիւ կռւի մէջ, որ դուք վերսկսում էք մի նոր եռանդով։ Ահաւասիկ իմ ձեռքը։ Ես ձեր տրամադրութեան տակ եմ և պատրաստ եմ մաքառել իմ բոլոր ուժերով ձեր սուրբ դատի համար։

Հէնց որ ազատ ժամանակ ունենամ քրքրելու իմ ունեցած վկայաթղթերը, կուղարկեմ ձեզ մէկ յօդուած, հայկական խնդրի մասին, որը պիտի դառնայ ազատութեան խնդիր թիւրք կառավարութեան մէջ տառապող, հարստահարուած բոլոր տարրերի համար։

Զընայած ներկայ ժամանակի դժնդակ փորձերին, ուր աւելի քան երբևիցէ ուժը վեր է իրաւունքից, պահեցէք հաւատ և յոյս... Մարտիրոսների արիւնը չպիտի հոսէ ապարդիւն։

Վստահ եղէք, ուրեմն, իմ աջակցութեան վրայ"։

*

Ֆր. Պարլամենտի անդամ Շօվիէրի յօդուածը, որ կրում է „Հայրենիքի համար" խորագիրը։

„Հայրենիք եմ անուանում ես այն վայրը, ուր իմ հարազատները շրջապատել են ինձ իրենց սիրով ու գուրգուրանքներով, ուր ես սովորել եմ ապրել, կռւել ու տանջւել։ Դա այն տեղն է ուր իմ նախնիքներն են մեծացել, և որ նրանք ոռոգել են իրենց արիւնով ու քրտինքով։ Դա գերդաստանն է, որ լայնացել, աճել է, դա մէկ մասն է մարդկութեան, և լինի նա յուրտ, ինչպէս Լապօնեան, կամ այրող, ինչպէս Սենեգալը, կամ թէ բարեխառն, ինչպէս Ֆրանսիան, ես չեմ զարմանում, որ մարդիկ իրենց կապած են զգում այդ վայրին։

Այդ զգացումը կարող է լինել ստոր և վեհ։ Ստոր է նա, եթէ ժխտում է այլոց հայրենիքի սէրը, եթէ առաջացնում է այն անմիտ մարդատեացութիւնը, որ մեր լեզուով կոչւում է շովինիզմ (նեղ հայրենասիրութիւն)... Եւ ընդհակառակը վեհ է այդ զգացումը, եթէ նա յարգում է ուրիշի հայրենիքը, եթէ նա հասկանում է, որ պժգալի ոճիր է՝ խլել մի ժողովրդից իր ազատութիւնը և հպատակեցնել նրան մեր քմահաճութեան, մեր խելագար բռնակալութեան...

Հայրենիքը խաւարում է ամեն տեղ ամէնակարողների ճիգերի տակ։

Տրանսվալ հոգեվարքի մէջ է։

Ֆիլիպինեան կղզիները գալարւում են վերջին մաքառման արհաւիրքների մէջ։

Չինաստանը շաղախում է իր հողը հարազատների արիւնով։ Ո՞ւր է մնում հայրենիքը, ո՞ւր գերդաստանը, ո՞ւր մարդկութիւնը այդ քուրայի մէջ, որը լափում է և՛ մարդկութիւն և՛ գերդաստան և՛ հայրենիք։

Ա՜հ, սթափւե՜նք, պաշտպանենք բռնաբարւած իրաւունքը, թոյլերի գոյութիւնը, պաշտպանենք ազատութիւնը։

Հայաստանի զաւակնե՜ր, խօսեցէք բարձրաձայն մեր թմրած խղճին ու գիտակցութեան, թօթափեցէք մեր քունը։ Կը գայ օրը, երբ բոլորն էլ գարշանք կը զգան դէպի բռնութիւնը. այդ օրը գալիս է արդէն։ Ծնեցրէք այն վսեմ թռիչքը, որ կը փրկէ ձեզ, կը փրկէ և մեզ"։

—

Ա Ր Թ Ո՛ Ի Ն

„Մտատանջող ու արդէն չարագուշակ համբաւներ կարծէք նոր ջարդեր են գուժում Հայաստանի մէջ։ Կարմիր խենդութիւնը նորից մօտենում է կարծէք։ Եւրոպան այս անգամ էլ արդեօք պիտի թոյլ տայ անել։ Նա արդէն մեծ ոճիր գործեց, զոհելով մի ամբողջ ազգաբնակութիւն սուլթանի ժոլեգին սարսափներին և դիւանագիտութեան դաւերին։ Բայց ոճիրը այս անգամ աւելի մեծ պիտի լինի, քանի որ Եւրոպան ահռելի փորձառութեամբ ազդարարւած է այն հետևանքների մասին, որոնց յանգում են նրա երկպառակութիւնները, մրցումներն ու հաշիւները։

Ակամայ հարց էք տալիս՝ արդեօք սուլթանը չի՞ յենւում սուլթանի և Հարաւ-Աֆրիկայի անցքերի վրայ, որոնք կլանում են պետութիւններին և խուլ կերպով միմեանց դէմ հանում նրանց — որպէսզի վերջ դնէ հայ ազգի մէջ մնացած կորովի տարրերին։

Ահա թէ ինչու պաղատագին խնդրում ենք Ֆրանսիայի կառավարութեան՝ չխրել մեր քաղաքականութիւնը ծայրագոյն Արևելքի անվերջ արկածի մէջ։ Պէտք է, որ նա ազատ մնայ՝ նախ որպէսզի չվատնէ իր ուժը գազանային և յանցաւոր ձեռնարկների մէջ և ապա որպէսզի կարողանայ իր աչալուրջ հաստատակամութեամբ առաջն առնել այն նոր ոճիրների, որոնք պատրաստւում են մարդկութեան դէմ։

Եթէ վերսկսւին Հայաստանի ջարդերը և Եւրոպայի անտարբերութեան կամ մեղսակցութեան ոճիրը, քաղաքակրթութեան գաղափարն անգամ չի դիմանայ դրան"։

ԺԱՆ ԺՕՒԷՍ

* * *

Ապրիլին Սոֆիայում տեղի ունեցած կոնգրէսում կայացաւ Մակեդոնական Բարձր Կոմիտէի ընտրութիւնը։ Այդ առիթով „Դրօշակ"-ի խմբագրութիւնը ուղարկեց հետևեալ հեռագիրը՝ Սոֆիա, Մակեդոնական Բարձր Կոմիտէին։

«Հերմ շնորհաւորութիւններ նոր ընտրւած կոմիտէին։ Ցանկանում ենք յարատեւ եռանդ՝ ընդհանուր թշնամու դէմ մղւող կռւի համար»։

„ԴՐՕՇԱԿ"-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Իբրև պատասխան մենք ստացանք Սոֆիայից հետևեալ հեռագիրը.

«Շնորհակալութիւն եղբայրական զգացմունքների համար։ Ցուսանք որ ընդհանուր ջանքերը կը վերջանան փայլուն յաղթանակով»։

Նախագահ Մակեդոնական Բարձր Կոմիտէի
ՍՏՕՅԻԱՆ ՄԻԽԱՅԼՕՎՍԿԻ

* * *

„Եւրոպայի Հայ ուսանողական միութեան“ այս տարւայ Համագումարը տեղի ունեցաւ Միւնխէն, ապրիլի 1—8-ին։ Թէ՛ մասնակցողների թւով, թէ՛ դասախօսութիւնների քանակով և թէ՛ ընդունած որոշումներով Համագումարը պսակեց աջողութեամբ։ Պատգամաւորներ և անդամներ թւով մօտաւորապէս 50, եկել էին Գերմանիայի, Շվէյցարիայի և Բելգիայի բազմաթիւ քաղաքներից։ „Դրօշակ“-ի խմբագրութիւնը ուղարկել էր յատուկ ներկայացուցիչ։ Կային և հիւրեր երկու սեռից։ Դասախօսութիւնները թւով 10, վերաբերում էին գլխաւորապէս հայկական կեանքի ընթացիկ հարցերին։ Վերջին նիստերում մշակւեց գործունէութեան ծրագիրը, առաջիկայ տարւայ համար, բաղկացած 5 կէտից։

Յաջորդ Համագումարը տեղի կ'ունենայ 1902 թւին, Զատկի տօներին, Ժընևում։

Յանուն „Միութեան“ Համագումարը, միաձայն որոշմամբ, ուղարկեց համակրութեան երկու հեռագիր, մէկը Մակեդոնական Բարձր Կոմիտէին՝ Սոֆիա, և միւսը Փարիզ՝ Pro Armenia-ի խմբագրութեան։

Ահա Մակեդոնական Կոմիտէին ուղարկւած հեռագիրը.

«Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան» Համագումարը, կայացած Միւնխէնում, արտայայտում է ձեզ իր խորին համակրանքը։ Թիւրքական բռնութեան դէմ Հայաստանի զաւակները, կանգնած արիւնլայ հայրենիքի առջև, անկարող են չյիշել արեան, կռւի և յոյսերի երկրորդ հայրենիքը—Մակեդոնիան։ Դժբախտութիւնը մեզ միացրեց. թող այդ միութիւնը լինի աւելի ամուր՝ ընդհանուր կռւի մէջ»։

«Ողջոյն Մակեդոնիային»։

Անմիջապէս Մակեդոնական Կոմիտէից Համագումարը ստացաւ հետևեալ հեռագիրը.

«Խորապէս յուզւած՝ ուղարկում ենք մեր անկեղծ շնորհաւորութիւնները՝ մեր դժբախտակից եղբայրներին։ Զենք զիջանի ոչ մի ճնշման և ոչ մի ուժի առաջ և կը շարունակենք մեր ազնիւ պայքարը ազատութեան համար, հպարտ՝ կռւելու ժողովրդական ընդհանուր թշնամու դէմ՝ քաջարի հայերի հետ»։

«Կեցցէ ազատ Հայաստան»։

ԿՕՄԻՏԷ

ՆԻՒԹԱՏՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՐՕՆ *ստացած է՝*

Բ. քաղաքէն՝ Ջաւատ 240 ռուբլի, Խայթ 60 ռուբլի, Շխթա 50 ռուբլի, Քիօռ Օղլի միջոցով 1636 ֆրանք, Վիլ-ի „Ժեռնց“ խումբ 5 ֆր., ԵԿԵՂԵՑԻ-ի կոմիտէ (25 եւ 20 ռ.) 66 ֆր. 25 ս. եւ 53 ֆր., օր. Մել. Հ.-էն 10 ֆրանք, ԼԻԷԺԻՑ՝ Պ. Տ. Բ. 25 ֆրանք, ԿԱՐԼՍԲՈՒԷԻՑ՝ Պ. Խաչ 24 ֆր. 60 ս.։

ՈՍԿԵՀԱՆՔԻ *Կոմիտէն՝*

Հոկտ. 1-էն՝ ՆԻՆՈՒԷ քաղաքի „Սոսէ“ խումբ 80 ղուրուշ, Սուրէն 6. 25, Վիշապ, Զինւոր 10-ական, „Արաքս“ խումբ 65, Աստղ 8. 25, Նոյեմբ. 1-էն՝ Սեպուհ եւ Վահրամ 10. 50-ական, Զինւոր 10. 50, Արեւ 5. 25, Վեց հարւածեան (երկու ամսավճարք) 40, Հրացան 20, „Արաքս“ խումբ 50, Արարատ 80, Անծանօթ 10. 50, դեկտ.-էն Սեպուհ եւ Վահրամ 10. 50-ական „Արաքս“ խումբ 70, Վեց հարւածեան 20, Առիւծ 6. 25, Ոսկի 10. 50, Զինւոր (երկու ամսական) 20, ԱՐՇԱԿԱՒԱՆԷՆ՝ „Անծնազոհ“, „Երկիւղած“ եւ „Աղգասէր“ խմբերէն 95։ Գումար 669. 50 ղրշ.։

ՆԱԻԱՀՍՆԳՍՏԻ *Կեդր. Կոմիտէն՝*

Մեքենայ 5 ռուբլի, Սուր 5, Շառաւիղից 32 ռ. 85 կ., „Զինւոր“ խումբ 10, Տարօնեցի Դազան 5, Նոր քաղաքի „Շանթ“ խումբ 10, „Նեփրոտ Զուլումաթ“ խումբ 20 ռուբլի։ Գումար 87 ռուբլի 85 կոպէկ։

ԾՈՎԱՓԻ *Կեդր. Կոմիտէն՝*

„Պատանեաց“ խումբ (օգոստ. սեպտ. հոկտ.) 54 ղուրուշ, Մարկոս (ղեկ.) 5 ղրշ։ Գումար 59 ղուրուշ։

Կ. ՊՕԼՍՈՅ *Կեդր. Կոմիտէն՝*

Ատրճանակ 140 ղուրուշ, Կախաղան 36, Կոպիտ 5, Կամք 35, Նուէր 5, Մօտին 30, Հոսանք 10, Դաշոյն 5, Զարմայր 4, Աղբիւր-Սերոբ 5, Ատրճանակ 40, Հոսանք 20, Մօսին 9, Զարմայր 2 ղրշ։ Գումար 275 ղուրուշ։

ԳԱՀԻՐԷԻ *Կեդր. Կոմիտէն՝*

Աշոտ 45 դահեկան ոսկի, Վարդգէս 40, Աշոտի ձեռամբ՝ Ա. Բ. 45, Ծիրածանի ձեռամբ 25, Հայկ-Նահապետ 30, Պարոյրի ձեռամբ 10, Պօղոս Յակոբեան, Մկրտիչ Պօղոսեան, Վարպետ, Վարդան, Ծրկաթ, Բարեսէր, Բարեսէր ուն, Կայծակ, Ա. 5-ական, Ճըլվըլիկ, Փայլակի ձեռամբ, Կ. Գ.-եան, Ծիրածան 10-ական, Արեւելքցի 20 դահեկան։

Նախորդ տարւայ հաշիւէն՝ Ճըլվըլիկ, Օսմ. Բանակ 10-ական դահ. Գումար 320 դահեկան ոսկի։

ՊԱՒԼՔԱԵԱՆ *առժամանակեայ Կեդր. Կոմիտէն՝*

ՌՈՒՇՃՈՒՔԷՆ՝ (Աշոտի ձեռքով հանգանակւած)՝ „Տէոոր“ խումբ 40 լէվ արծաթ, Ոսկերիչ 800, Լէվոֆ 500, Վարդան 300, Ատրճանակ 250, Ն. Գ., Աստղիկ, Ա. Բ. 100-ական, [illegible] 10259 Ս. Զ. 200, Զարուկ, Գ. Բ., Մ. Դ. 50-ական, Գ. Ն. 30, Հաճի Թագուհի, Համբարձում դեղին 10-ական։ Գումար 2590 լէվ արծաթ։

ՎԱՌՆԱՑԷՆ՝ Ծրկաթագործ, Կարապետ Բարսեղեան, Լ. Ս. 200-ական ոսկի ֆրանք, Սիսակ 150, Բարեկամ 40, Գարապետ 20։ Գումար 810 ոսկի ֆրանք։ Արաքս 50 լէվ արծաթ, Հաւատացեալ 100, Թ. 40։ Գումար 190 լէվ արծաթ։

ՍՕՓԻԱՆ՝ Սեւ աչ 50 լէվ արծաթ, Առիւծ 40, Պօքսէր, Ծրկաթ, Լուսին 20-ական, Կաշի, Սէրկի 10-ական, Քարածուխ, Անանուն, Թրանսվալ, Շուպարա, Խուրշիտ 5-ական։ Գումար 195 լէվ արծաթ։ Ընդհանուր գումար 2975 արծաթ լէվ, 810 ոսկի ֆրանք։

ՍՈՒԼԻՆԱՑԻ Հ. Յ. Դ. „Նոր-դար“ խումբի 1900 տարեշրջանի ստացած բոլոր մուտքը (յունուար—դեկտեմբեր).

1899-ին Պարթեւ 5 ընկերէ գումարւած 28. 50 ֆրանք, Համազասպ 17, Պարթեւ 12, Ս. Սարգիսեան 5, Վրտանէս 17 Աշոտ 12, Միսակ 17, Պետրոս 16, Տաճատ 12, Միհրան 17 Ոմն (հանգուցեալ Հայեակ) 2, Սիսակ 16, Տիգրան 14, Վահրամ 16, Նշան 16, Հրանդ 12, Բարկէն 13, Գուրգէն 2, Օտեսայի „Խնդրակատար“ խմբէն ստացւած է (9 ռուպլի) 23. ֆր. 40 սանթիմ։ Գումար 265 ֆրանք 90 սանթիմ։

ՔՕՆՍԹԱՆԶԱՑԻ „Դեւեան“ խուիքը ստացած է՝ Վահրիմ 5 ֆրանք, Պարոյր 1. 25, Յ. Կոզմոսեան 5, Աւետիս 5, Ճանապարհորդ Գ. Ա. 2, Տ. Լ. 10, „Զորս զանձ“ խմբի ամսավճարներէն Զարմայր 2. 50, Վաղտրշակ 2. 50, Ցոլակ 3. 75, Մուշեղ 2. 50, Լեւոն 2. 50, Թորգոմ 2. 50, Արտաւազդ 3. 75, Զաւէն 3. 25, Բարկէն 3. 55, Հայկակ 2. 50, Հրանդ 2. 50, Դեղամ 2. 50, Գագիկ 1. 25, Դեղամ 1. 25, Զարմայր 1. 25, Թորգոմ 1. 25, Պարոյր 1. 25, Մուշեղ 1. 25, Արտաւազդ 1. 25 ֆրանք։ Ընդամենը 71 ֆրանք 30 սանթիմ։

ՀԱՇԻԷԻ կոմիտէն (Ամերիկա) ստացած է 1900-ին՝ Յ. Կ. 20. 84 դոլար, Պ. Կ. Կ. 20, Խ. 11. 25, Մ. Պ. 5. 75, Ք. Պ. 5. 75, Գ. Մ. 5, Խ. Ա. 5, Սրան 4, 22, Զ. Կ. 3. 50, Կ. Ք. 3. 50, Ս. Ց., Վ. Ց., Ն. Կ., Մ. Օ., Ց. Պ., Ց. Ք., Ց. Փ. մէկ-մէկ-ական դոլար, Զ. 25 սենթ։ Գումար 93. 07 դոլար։

ՎՐԻՊԱԿ.—№ 9 (110) ՈՍԿԷՀԱՆՔԻ ցուցակ՝ Արշոն՝ 99 դահ. ուղղելի Պօլսն 90 դահ., Սոխ 65 դահ. ուղղելի Սոխ 66 դահ., Սեւտրակին եղբօրմէն 17. 50 դահ. ուղղելի Սէակին եղբօրմէն 35 դահ., Անուն տուզաղ Դարձակ, ուղղելի անուն Հուզող Դերձակ։

Նոյն թիւին մէջ մոռցւած է՝ Ազարեան էֆ. 17. 50 դահեկան։

Խմբագրութեանս դիմել հետևեալ հասցէով՝

Rédaction du „Droschak“, Genève (Suisse)